هویس میسه شه ایشلی - فرهنگی
شماره ۶۵، ۲ دی ۱۳۸۸ قیمت ۹۰۰ تومان
Հույս
թիվ 65
Աշխարհների Հաստատությունն
Երկշաբաթաթերթ
Դեկտեմբեր 23, 2009, 900 թուման
Հաստատված է 1911 թվին

Նոր տարի է, սազս առնեմ, ճեռս քաշեմ
զնգուն լարին,

Աշխ թեքեցինք, հինը անցաւ,
նալաթ նրա տւած չարին,

Մաղթենք, նորը ելնի անցաւ,
բերի հազար խերն ու բարին,

Նորի բերած խաբարները ճիշտ
ուրախալի ելնեն այ:

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Գ տարի, թիւ65, Դեկտեմբեր 23, 2009,
900 թուման
Հայաստանում 380 դրամ

«Յոյս»-ի յաջորդ համարը լույս է տեսնելու 2010 թվականի Յունվարի 13-ին
23 դեկ 1388

4

26

ԳԼԽԱՒՈՐ ՆԻԹ

4 **Նոր Տարւայ մաղթանք**
Աշուղ Ծատուրօղլի

8 **Իրանահայերը 2009-ին**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

2 **Համայնք**

13 **Հարցազրոյց Իրանում ՀՀ դեսպան՝ Գրիգոր Առաքելեանի հետ**
Շաքէ Ա. Պետրոսեան

17 **Մանկական**
Ագնէս Ազարեան

21 **Հարցազրոյց Իրանում ՀՀ դեսպանի տիկնոջ՝ Փառանձեմ Առաքելեանի հետ**
Շաքէ Ա. Պետրոսեան

25 **Նազիկ Աւդալեանը՝ աշխարհի չեմպիոն**

26 **Գերմանացի աղջիկները ծանօթանում են տղամարդկանց զբաղմունքներին**

27 **Կանանց իրաւունքները Սուրբ Գրքում**
Տէր Մուշեղ Աւետեան

28 **Թեհրանը՝ թափօնների գերի**

29 **Կանաչ էներգիայի ապագան**

32 **Ձանազան**

33 **Աւետիս, Աւետիս**
Շաքէ Ա. Պետրոսեան

36 **Ժամանց**

Յոյս
Հասարակական-մշակութային
երկշաբաթաթերթ

Արտօնատէր՝
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝
Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Քարմէն Ազարեան,
Լիա Խաչիկեան,
Անդրանիկ Խեչումեան,
Գարուն Սարգսեան,
Անդրանիկ Սիմոնեան,
Կոլիա Տէր Յովհաննիսեան,
Վանէ Տէր Պետրոսեան

Գեղարուեստական ձեւաւորում՝
Լիա Խաչիկեան

Սրբագրիչ՝
Քարմէն Ազարեան

Գովազդ՝
Ա. Ազարեան

Հասցէ՝
Թեհրան, Էնղելաբ պողոտայ,
Վալի Ասր քառուղի
համար 1048

Հեռախօս՝
66495180
66492693
Հեռախօս-հեռապատճէն՝
66495208
Էլեկտրոնային փոստ՝
hooys@inbox.com

համացանցային կայք՝
www.hooys.com

Թ.Հ.Թ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

ՀԱՍՏԱՏՒԵՑ Պ.Ժ-Ի ՆԻՍՏԵՐԻՆ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ 10 Նոյեմբեր 2009 նիստ

«Պատգ. ժողովի վերջնական հաստատումն ստացաւ նաեւ Պատգ. ժողովի նիստերին իրանահայ մամուլի թղթակիցների մասնակցութեան հարցը իր ընդհանրութեան մէջ: Պատգ. ժողովի նիստերին մամուլի մասնակցութեան՝ ու նաեւ յանձնաժողովների գործունէութեան վերաբերեալ դիւանի կողմից կազմուել էին կանոնակարգերի նախագծեր, որոնք յանձնուեցին թէ՛ կազմակերպչական հարցերի յանձնաժողովին, եւ թէ՛ միւս պատգամաւորներին՝ առ ի ուսումնասիրութիւն, որը պէտք է քննարկման նիւթ դառնար Պատգ. ժողովի յաջորդ նիստերում»:

8 Դեկտեմբեր 2009 նիստ

«...քննարկուեց եւ հաստատուեց Պատգ. ժողովի յանձնաժողովների ու Պատգ. ժողովին իրանահայ մամուլի թղթակիցների մասնակցութեան կանոնակարգերը: Պատգ. ժողովը ողջունում է իրանահայ մամուլի ներկայութիւնը՝ իր առաջիկայ նիստերին»:

«ԹՈՒՆԵԱՆ»-Ի ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՏԱՓՈՅԹ ՅԱՐՄԱՐԱՒԷՏ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ 8 Դեկտեմբեր 2009 նիստ

«Սոյն նիստում նախեւառաջ դիւանի կողմից ժողովին զեկուցուեց նոյ. 26-ին Սասուն քաղաքամասում «Թունեան» դպրոցի ծնողների հետ ունեցած հանդիպման արդիւնքները: Ժողովը բարձր գնահատեց հանդիպման արդիւնքը, որտեղ հնարաւոր եղաւ ծանօթանալ ծնողների բուն մտահոգութիւններին: Հարցի քննարկման աւարտին Թեմական խորհրդին յանձնարարուեց «Թունեան» տարրական դպրոցի աշակերտութեանը շուտափոյթ կերպով յարմարաւէտ վայր տեղափոխելու, կամ ներկայ շէնքում յարմարաւէտ պայմաններ ստեղծելու խնդիրը քննարկել եւ ապա կատարուած աշխատանքների մասին տեղեկացնել Պատգ. ժողովի դիւանին:

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ 2010 ԹՒԱԿԱՆԻ «ՆԱՅԻՐԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

Ստացել ենք 2010 թւականի «Նայիրի» օրցոյցը, որն արդէն 57 տարի է, ինչ լոյս է տեսնում: «Նայիրի» օրացոյցը հիմնադրել է Սամուէլ Սարուխանեանը, որի գործն այսօր շարունակում է Սեպուհ Ամիրխանեանը: Օրացոյցի նիւթերը կազմել է Շաքէ Ա. Պետրոսեանը, էջերի ձեւաւորումը կատարել են Մեդէա Կարապետեանը եւ Թեւիկ Ծատրեանը: Օրացոյցի էջերի լուսանկարները Արմէն Նազարեանի գործերն են: «Նայիրի»-ն այս տարի եւս ինչպէս միշտ հրատարակել է նաեւ գրպանի օրացոյց: Հրատարակչութեան տնօրէն Սեպուհ Ամիրխանեանը «Յոյս»-ի աշխատակազմի բոլոր անդամներին նուիրել է մի օրինակ պատի եւ մի օրինակ գրպանի օրացոյց, որի համար մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում նրան:

«ԲԱՌ ՈՒ ԲԱՆՔ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ճարտարագէտ Վարդգէս Զարգարեանի առաջին գիրքը՝ «Բառ ու բանք»-ը՝ տպագրուած Թեհրանում, «Նայիրի» հրատարակչութեան կողմից, մի ուսումնասիրութիւն է նուիրուած Սայաթ-Նովայի 27 տաղերում պարսկերէն, արաբերէն եւ թուրքերէն բառերի ստուգաբանութեանն ու բացատրութեանը: Հեղինակը, ուսումնասիրելով եւ օգտագործելով տարբեր բառարաններ, ինչպէս նաեւ Սայաթ-Նովայի մասին առկայ ողջ գրականութիւնը, տուել է օտար բառերի մեկնութիւնները: Գրքի առաջաբանը գրել է Իրանի Իսլ. Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ արտակարգ դեսպան պարոն Գրիգոր Առաքելեանը, որը մասնագիտութեամբ արեւելագէտ-իրանագէտ է:

Այս ուշագրաւ գրքի շնորհանդէսը տեղի ունեցաւ Երեւանում, 2009 թւականի Նոյեմբերի 28-ին, Հայաստանի Ճարտարապետների միութիւնում: Ներկայ էին հեղինակը եւ հրատարակիչը, ՀՀ-ում Իրանի դեսպանութեան մշակութային կենտրոնի վարիչ պարոն Շաքիբային, սայաթնովայագէտ Հենրիկ Բախչինեանը, ՀՀ մշակոյթի նախարարութեան ներկայացուցիչը, հայրենի գրողներ, հրատարակիչներ, մշակութային գործիչներ, մեծ թւով հիւրեր եւ հայրենիքում հաստատուած իրանահայեր:

ՎԱՂԱՀԱՍ ՏԱՐԻՔՈՒՄ ԿԵԱՆՔԻՆ ՀՐԱԺԵՇՏ ՏԻԵԺ ԻՐԱՆԱՀԱՅ ԴԵՐԱՍԱՆ ԱՐԱ ԱՍԼԱՆԵԱՆԸ

Վաղ հասակում կեանքին հրաժեշտ տուեց իրանահայ բեմի գործիչ՝ Արա Ասլանեանը: Իրանահայերը Արային յիշում են նրա ասմունքներով եւ դերասանական գործունէութեամբ, այդ թւում «Շխոնց Միհրան» ներկայացման մէջ նրա հիանալի դերակատարութեամբ: «Յոյս»-ը նրա կորստի համար ցաւակցութիւն է յայտնում նրա ընտանիքին, հարազատներին եւ իրանահայ արուեստասէր հասարակութեանը:

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ՄԱՂԹԱՆՔ
ԾԱՏՈՒՐՕՂԼՈՒ ԱՍԱԾ

ՅԱՄԻ 2009 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՊԱՀԱՆ

Նոր տարի է, սազս առնեմ, ծեռս քաշեմ զնգուն լարին,
Աչք թեքեցինք, հինը անցաւ, նալաթ նրա տուած չարին,
Մաղթենք, նորը ըլնի անցաւ, բերի հազար խերն ու բարին,
Նորի բերած խաբարները միշտ ուրախալի ըլնենայ:

Ելէք, նորից երգ ու պարով գնանք նոր տարուն ընդառաջ,
Ձմեռ պապին արդէն եկել, սայլակը տուել է գարաջ,
Խանութները ռանգ ու բռանգ զարդերը դրել են հարաջ,
Խանութ մտնողի գրպանը մէ գունդ փողով լի ըլնենայ:



Երեխէքը մոբայլ կուզեն, մէրը՝ եւրոպական կօշիկ,
Թազզա թաստիղ առած տղէն կուզի մոդէլ բալա մաշին,
Աղջիկ ունես նշանելու, կը պլոկի գլխիդ կաշին,
Ջահէլների մուրազը թող միշտ կատարելի ըլնենայ:

Էկը ճարուի, կապը կտրած էս թանկութեան սանձը քաշի,
Մարդ կարենայ, օրը գոնէ մէ ձու դնի թաւէն խաշի,
Կամ տարենը գոնէ մէ հետ էրթա ռեստորանում ճաշի,
Նոր տարում ձեր սեղանը բոլ, ճաշը իւղալի ըլնենայ:



Զրօխնէքին ուտենք նորից պատւական քուքու-փլաւը,
Սեղանից անպակաս ընի, դասպիչ չելաւ՝ գոնէ հաւը,
Հայաստանցին կոնեակ կոնծի ու տանի սփիւռքի ցաւը,
Սփիւռքից էլ «թելեթոնի» աճը զգալի ընենայ:

Հայեր ականջ արէք խօսքիս, ձեր ձեռքն եմ տալիս գուշին,
Ղարաբաղ էք ուզում եթէ, յոյս միք դնի էլ ուրիշին,
Աղէտի գօտու պէս «արագ» վերականգնենք պիտի Շուշին,
Գալիք օրը ամէն հայի համար յուսալի ընենայ:

Կռուողները թող հաշտւեն, Խռովները թող բարիշեն ,
Մեղքի մէջ լող տւող մարդիկ իրանց եդի օրն յիշեն,
Գիտունները բալքամ քանդեն էս խոզի գրիպի ռիշէն:
Ամէն ասծու բանդի սիրտը լէն ու ցնծալի ընենայ:





Անցած տարի ուժեղ թափով շարունակւեց արտագաղթը,
Որոշները գլխին տալիս, անիծում են հայի բախտը,
Ո՞վ իմանայ, թէ որտե՞ղ է ինքը գալ տարի էս վախտը,
Ուր էլ գնաք ձեր ոտի տակ աբրեշում խալի ընենայ:

Դուինն ասաւ.«Գաղթս ո՞րն է, էս մի տեղափոխութիւն է:»
Ռոբերթն էլ թէ.«Ձա՛ն Գլենդել, էս մի յեղափոխութիւն է:»
Ծատուրն ասաւ.«Ինչ էլ չըլնի, մէ քիչ օդափոխութիւն է:»
Մարդ եմ ուզում, էս գժերի խօսքերը հալի ըլնենայ:

Թող նոր տարին մեր ջոջերին բերի մէ բոլ խելք ու խրատ,
Գործեր անեն լաւ ու լրիւ, չէ ձախ ու ծուռ, կիսատ պռատ,
Ժողովրդին չքալանեն ու իրանք վայելեն առատ,
Գէլն չգայ դառնայ չոբան, բանը ողբալի ըլնենայ:

Դառնամ մէկ էլ խրատ կարդամ էս աշխարհի զոռբաներին,
Մարդ արարած դեռ մինչեւ ե՞րբ եսիր մնաս դրանց ձեռին,
Քաղցր խօսքով իշխան դառաւ թխամորթ Օբամա քեռին,
Վայ թէ տուած խոստումները անհաւատալի ըլնենայ:

«Խաղաղութեան հրեշտակը» աշխարհը դրել է տակը,
Ով խօսում է, երկնքիցը գլխին թափում է կրակը,
Հէնց ըտուր համար էլ տուին նոբելական մրցանակը,
Մարդուս բախտն էլ էս աշխարում պիտի քաչալի ըլնենայ:

Թորմոզ արա, Ծատուրօղլի, արդէն տուիր քուլուզէքը,
Քեզ ինչ, թէ ում ձեռն են տուել, էս աշխարհի նաւի ղեկը,
Դու դատարկիր տնում քաշած քիշմիշի էրաղի պեկը:
Ու մաղթիր որ տարին առատ ցորեն ու գարի ըլնենայ:

Իրանահայերը

Ա ղ ե տ

Թեհրան- Երեւան Տոպոլովի կործանում

Յուլիսի 15-ին Ղազւինի մօտ խորտակւեց Թեհրանից Երեւան թռչող Կասպիան աւիաուղիների Տոպոլով օդանաւը: Զոհւեցին օդանաւի 158 ուղեւորները, այդ թւում 50-ից աւելի իրանահայեր, ՀՀ հինգ քաղաքացիներ, եւ հարիւրից աւելի այլ իրանցիներ, այդ թւում երկրի ջուդոյի երիտասարդական հաւաքականի անդամները: Օրաւուր փոքրացող իրանահայ համայնքի համար, սա ցնցիչ հարւած էր: Համարեա ամէն մարդ զոհւածների մէջ ունէր գոնէ մի բարեկամ, հարեւան, ծանօթ եւ այլն: Զոհւածների թւում էին նաեւ իրանահայ նշանաւոր դէմքեր, ինչպիսիք էին՝ Իրանի խորհրդարանի նախորդ նստաշրջաններում իրանահայութեան պատգամաւոր՝ Դոկտոր Լեւոն Դաւթեանը, եւ մեր գործընկեր ու բանաստեղծ Ազատ Մաթեանի եղբայր, ազգային-հասարակական գործիչ Մասիս Մաթեանը: Թաղման արարողութիւնը կատարւեց ամենայն

2009-ի

շուքով եւ համապարփակ կսկիծով ու ցաւով: Հայաստանում մէկ օր սուգ յայտարարուեց, սակայն ոչ Իրանում, որի քաղաքացիներից շուրջ հարիւր յիսունն էին զոհուել:

Ի՞նչ էր աղէտի պատճառը, ո՞վ էր պատասխանատու, ինչքանո՞վ էր մեղաւոր Կասպիան աւիաուղիների տնօրինութիւնը. ահա զոհերի ընտանիքների հարցերն ու պահանջները՝ Յուլիսի 22-ին «Կասպիան աւիաուղիներ»-ի գրասենեակի առջեւ տեղի ունեցած հանրահաւաքում:

Մինչ օրս, ոչ մի պատասխան:■

Իրան

նախագահական ընտրութիւններ

Անցեալ տարի, Իրանի նախագահական ընտրութիւնները եւ դրան յաջորդած բողոքի ցոյցերը, երկրի կարեւորագոյն իրադարձութիւններն էին: Մի երկու շաբաթ մնացած ընտրութիւնների ժամկէտին, իրանահայերը մտքի ընկան իրենց պահանջները ներկայացնել նախագահութեան չորս թեկնածուներին: «Արարատ» մարզաւանում կայացան հանդիպումներ նախագահութեան թեկնածուների ներկայացուցիչների հետ: Տեղի ունեցաւ նաեւ մի հանրահաւաք «էթելաաթ» օրաթերթի դահլիճում, Միրհոսէյն Մուսաւիին համակրող մի խումբ հայերի կողմից: «Ալիք»-ն յայտարարեց ընտրութիւններին վերաբերող որեւէ հաւաք, եթէ դա արւում է համայնքի անունից, պիտի լինի ազգային իշխանութիւնների կողմից, մինչդեռ վերջին ձեռնարկի կազմակերպիչները չէին յաւակնել, որ համայնքի ներկայացուցիչներն են: Յամենայն դէպս, համայնքը փորձեց, օգտագործելով նախագահական ընտրութիւնների առիթը, իր հարցերը ներկայացնել երկրի իշխանաւորներին: «Ալիք»-ը մի յօդուածով իրանահայութեան պահանջները ձեւակերպում է հինգ կէտերում: Նոյն յօդուածում կարդում ենք հետեւեալ տողերը.

«Վաղուց արդէն սպառուած հասկացութիւն է «փոքրամասնութիւն» կոչուածը, քանզի առաջին թէ

երկրորդ կարգի քաղաքացիներ ասուածը անհեթեթութիւն է, լինի դա կրօնական, համայնքային թէ՝ քաղաքական: Այսպէս «քաղաքացիական հասարակութիւն» ասուածը, մեղմ ասած, վերածւում է լոզունգի... »: Եւ իհարկէ այս անելիս, «Ալիք»-ի յօդուածագրի համար հարց չառաջացաւ, որ արդեօք իրաւասո՞ւ է խօսել համայնքի անունից: Դա հասկանալի է, քանի որ պարզ է, նա յայտարարում էր համայնքի խնդիրները ըստ իրեն, այնպէս ինչպէս ինքն էր հասկանում. մի բան, որ նրա իրաւունքն էր: Հէնց այնպէս, ինչպէս իրաւունք ունէին անելու թեկնածուներից որեւէ մէկին համակրող հայերը:■

Համայնքային քաղաքականութիւն

իրարանցում այլախոհերի շարքերում

Իրանահայ համայնքն ունի իր քաղաքական բեմը, որը բնորոշւում է դաշնակցական-«այլախոհ» հակադրութեամբ, եւ տիրող գաղափարական-կուսակցական նեղմտութեամբ ու մենաշնորհային հակումներով: Վերջին տարիներին, պէտք է խոստովանել, որ քիչ թէ շատ հալւել է նախկին բեւեռային այդ սառուցեալ վիճակը, սակայն, այդուհանդերձ, դեռ շարունակւում են նեղմտութիւնները, եւ անցեալ տարի եղաւ մի ժամանակ, որ դա այնպիսի չափեր ստացաւ, որ «Յոյս»-ի արտօնատէր Լեւոն Ահարոնեանը անդրադառնալով մեր թերթին եւ ընդհանրապէս «միւսներին» զեղչելու եւ անտեսելու նրանց փորձերին, բողոքեց հետեւեալ թունդ արտայայտութեամբ.«Որի՞ն հաւատանք: Հայաստանում ժողովրդավարութեան մասին արտասանած ճառերի՞ն, թէ՞ Թեհրանում կիրառած միապետական ընթացքին»:

Միւս կողմից նկատւեց իրարանցում հէնց իրենց «այլախոհներ»-ի կամ ոչ-դաշնակցականների շարքերում: Այն աստիճանի, որ նոյն ուղղութեան հետեւող անձը մի յօդւածում հանդէս եկաւ այսպիսի խորագրով. «Վերջին տարիներին Դաշնակցութիւնը ԻԱՄՄ-ի ղեկավարութիւնից աւելի դեմոկրատ գտնւեց» (Աբնուս Վազգէն, «Յոյս» թիւ 58): Հարցը վերաբերում է «Յոյս»-ի թիւ 56-ում ԻԱՄՄ-ի վարչութեան գրութեանը, ուր, ըստ Աբնուսի, սխալ յաւակնութիւններ են եղել պատգամաւորական ժողովի եւ միութեան ներքին ընտրութիւնների վերաբերեալ: Հարցը վերաբերում է ժողովրդավարութեան իմաստին. արդեօք դա նշանակում է, որ մեծամասնութիւնը՝ հիմնւելով իր 50+1 քւէների վրայ, կարող է անել՝ ինչ ցանկանում է, թէ պիտի յարգի փոքրամասնութեան իրաւունքները եւս:■

Դ ԻՏԱԼՆԿԻՒՆ

«Յոյս» երկշաբաթաթերթի յարգելի խմբագրութիւն

հանդիսում է սոյն գրութիւնը տպագրել ի բացատրութիւն թերթի 56-րդ համարի 3-րդ էջում տեղ գտած, ԻԱՄՄ միութեան վարչութեան յօդւածի:

Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միութեան անդամ

Աբնուս Վազգէն

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԱՄՄ-Ի ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՏՆՒԵՑ

Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միութեան մէջ կան ներքին այնպիսի խնդիրներ, որոնք աւելի ճիշտ կը

մի կանոնադրութեան, կուսակցութիւնը կարող է 50+1 մեծամասնութիւն կազմող որեւէի ուժով վերը նշած

Հայաստան-Իրանահայութիւն

«երկերկրացիներ»-ի նոր խաւ

Ապրիլի 13-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը այցելեց Իրան եւ «Արարատ» մարզաւանում հանդիպում ունեցաւ նաեւ իրանահայերի հետ եւ նրանց վստահեցրեց, որ Հայաստանի Հանրապետութիւնը Թուրքիայի հետ իր յարաբերութիւնների նորմալացման գործում չի անտեսի ցեղասպանութեան ճանաչման հարցը: Սակայն, երբ Հոկտեմբերի 10-ին, Ցիւրիխում ստորագրուեցին Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնները կարգաւորող երկու արձանագրութիւնները, իրանահայերի քաղաքական կազմակերպութիւնները այնքան էլ գոհ չէին: Այս արձանագրութիւնները քննարկելու նպատակով կազմակերպւած զանազան հանդիպումներին, թէեւ հնչեցին նաեւ արձանագրութիւններին կողմ կարծիքներ, սակայն տիրող տրամադրութիւնը դէմ էր դրանց ստորագրութեանը: Հետաքրքիրն այն է, որ այս հարցում համարեա տարբերութիւն չկար «Ալիք»-ի եւ «Արաքս»-ի խմբագիրների տեսակէտների միջեւ:

Այսքանը իրանահայերի եւ Հայաստանի կապերի պաշտօնական եւ քաղաքական մակարդակի մասին: Աւելի խորը շերտերում շարունակւեցին փոխադարձ հասարակական եւ մշակութային կապերի սերտացումը: Իրանահայերի լեզուն, հայկական հեռուստալիքների ազդեցութեան տակ, մօտենում է երեւանեան հայերէնին: Աշխոյժ երթեւեկութիւնը Հայաստան, օգնում է հայաստանցիները եւ իրանահայերը ծանօթանալ միմեանց մշակութային իւրայատկութիւններին եւ աստիճանաբար ստեղծւում է պատկառելի թւով «երկերկրացիների» խաւ, որոնք բնակւելով մասամբ Թեհրանում, մասամբ Երեւանում, կամուրջի դեր են կատարում իրանահայերի եւ Հայաստանի յարաբերութիւններում: Իրանահայ արւեստագէտները մասնակցում են «Հայ ֆեստ»-ում, «Ոսկէ Օիրան»-ում եւ այլ հայաստանեան փառատօներին եւ ծանօթանում Հայաստանի արւեստի ու մշակոյթի դէմքերի եւ ընդհանուր մթնոլորտի հետ:■

Մշակոյթ եւ Արուեստ

ինչպէս միշտ

Շարունակուեցին աւանդական պարախմբերի եւ երգչախմբերի ձեռնարկները: Մշակութային կեանքում քիչ թէ շատ երեւելի դէպքեր են ֆրանսահայ վիպագիր Գրիգոր Պըլտեանի այցը Իրան՝ «Հանդէս գրականութեան եւ Արուեստի» եռամսեայ թերթի եւ «Իրանահայ գրողների միութեան» հրաւէրով, Արման Ստեփանեանի մասնակցութիւնը «Իրանը՝ ներսից դուրս» միջազգային ցուցահանդէսին, «Արարատ» Մարզաւանի եւ Հայ ակումբի ճարտարապետ Ռոստոմ Ոսկանեանի այցը՝ Թեհրան, Վարուժ Քարիմ Մասիհիի վերջին ֆիլմի՝ «Տարակուսանք»-ի ցուցադրումը երկրի սինեմաներում:

«Տարակուսանք»-ը ցուցադրուեց նաեւ Երեւանի «Ոսկէ Ծիրան» փառատօնում, ուր Վարուժը եւս սփիւռքի նախարարութեան կողմից պարգեւատրուում է որպէս սփիւռքի լաւագոյն ռեժիսոր:

Գրքի ասպարէզում կարելի է յիշել Լեւոն Ահարոնեանի «Փոթորկոտ կեանքիս օրերը» երկհատորեակի հրատարակութիւնը պարսկերէնով, որոնց մէջ ներառուած են թէ՛ հեղինակի անձնական յուշերը, եւ թէ՛ դրւագներ մեր համայնքի քաղաքական-հասարակական պատմութիւնից: Նաեւ Ժանէթ Լազարեանի կազմած «Հանրագիտարան իրանահայոց» գրքի երկրորդ հրատարակութիւնը եւ Վարդգէս Զարգարեանի «Բառ ու Բանք»-ը, որը հետաքրքիր ուսումնասիրութիւն է Սայեաթ-Նովայի օգտագործած պարսկերէն բառերի մասին:■



Գաղթ

Դէպի Գլենդել

Իրանահայութիւնը, երգելով հայրենիքի գովքը,մտահոգւած հայ-թըրքական յարաբերութիւնների բարելաւման մասին, չւում է Գլենդել: Այս տեմպով, յառաջիկայ տաս տարիներում Իրանը համարեա կը պարպւի հայութիւնից: Դա լա՞ւ է, թէ՞ վատ: Սրբազան հայրն ասում է. «Ամերիկա երթալը դրախտ երթալ չի նշանակէր, ընդհակառակը, աւելի շուտ արդիական դժոխք երթալու համահաւասար է» : Բայց նաեւ կայ այսպիսի տեսակէտ. «Իւրաքանչիւր անձ տարիներ աշխատելուց եւ թոշակի անցնելուց յետոյ իրաւունք ունի ընտրել իր ցանկացած բնակութեան վայրը եւ կեանքի մնացած տարիները վայելել իրեն հաճելի ձեւով»: (Դւին Գալըստեան, «Յոյս» թիւ 63)

Չկան կամ չեն յայտարարւում վիճակագրական տւեալներ արտագաղթի մասին, սակայն արագօրէն նւազում է միութիւնների անդամների եւ դպրոցների աշակերտութեան թիւը: 2008-ին փակւեց «Քուշէշ» դպրոցը, 2009-ին՝ «Ալիշան»-ը: Յաճախ, ազգային մարմիններն են մեղադրւում դպրոցների փակման համար, սակայն իրականութիւնն այն է, որ ամայի դասարաններով դպրոցը չի լինի բաց պահել:■

Հայաստան-Իրան

ռազմավարական յարաբերութիւններ

Սերժ Սարգսեանի այցը Թեհրան, մի անգամ եւս եկաւ ապացուցելու, որ Հայաստանի եւ Իրանի յարաբերութիւնները երկու կողմից էլ կարեւորւում են որպէս երկարատեւ ռազմավարական յարաբերութիւններ: Հայաստանը կազմում է Իրան-Ռուսաստան առանցքի միջին օղակը, որը արգելում է Ամերիկա-Թուրքիա-Ադրբեջան առանցքի գերակշռումը տարածաշրջանում:

Մարտի 9-16-ին իրանցի գրողների մի պատւիրակութիւն այցելեց Հայաստան, «Իրան-Հայաստան գրական-մշակութային կամուրջ» կոչւած երրորդ գիտաժողովին մասնակցելու նպատակով: Խօսք է գնում Իրան-Հայաստան երկաթգծի մասին: Իրանում Հայաստանի նոր դեսպան է նշանակւում Գրիգոր Առաքելեանը, որը ծագումով իրանահայ է, եւ երկար տարիներ է, ինչ աշխատում է Իրանում, որպէս ՀՀ պատւիրակութեան անդամ: Պարսիկ ուսանողները Հայաստանում արդէն կազմում են պատկառելի թիւ, իսկ պարսիկ զբօսաշրջիկների ներկայութիւնը Երեւանի փողոցներում օր-օրի աւելի զգալի է դառնում:

Հիմնադրւել է Իրան-Հայաստան բարեկամութեան միութիւնը, որի պատւիրակութիւնները այցելել են Երեւան, սակայն միութիւնը դեռ հարկ եղածի չափ աշխոյժ չէ:■

Մամուլ

ՊԺ-ի հանդիպումները՝ դռնբաց

Դադարել է 2002 թւականից Թեհրանում լոյս տեսնող «Հանդէս գրականութեան եւ արւեստի» եռամսեայ պարբերականի հրատարակութիւնը: Դա յոյս ունենաք ժամանակաւոր լինի, քանի որ Հանդէսի արտօնատէր Վարուժ Սուրէնեանը նոր ձեւեր (եւ նոր մարդիկ) է փնտրում թերթի հրատարակութիւնը շարունակելու համար (ինչը հեշտ չէ գտնել):

Դեկտեմբերի կէսերին հրապարակւեց Պատգամաւորական Ժողովի նիստերին իրանահայ մամուլի ներկայացուցիչների ներկայութիւնը ազատ լինելու մասին կայացւած որոշման լուրը, որն ինքնին ուրախալի էր, քանի որ ՊԺ-ի պաշտօնական ու կրկնւող հաղորդագրութիւններով, վաղուց արդէն զգալի էր դարձել տեղեկատւական բացը մեր համայնքում:

Ամէն օր, կանոնաւոր հրատարակւում է «Ալիք»-ը, շարունակւում է հրատարակւել «Արաքս»-ը, թէկուզ ոչ այնքան կանոնաւոր, մերթ ընդ մերթ հրատարակւում է նաեւ փոքրածաւալ «Լոյս»-ը (ըստ երեւոյթին միայն Ռ. Սարդարեանի ուժերով): Եւ ի վերջոյ, երկու շաբաթը մէկ լոյս է տեսնում «Յոյս»-ը, որը փորձում է արտացոլել իրանահայ համայնքում առկայ բոլոր տեսակէտները եւ ուղղուածութիւնները:

Իրանահայերի *անլայն* ներկայութիւնը, թէեւ աճում է, բայց դեռ թոյլ է: Էլեկտրոնային մամուլը ժամանակների հետ քայլելու չափանիշ է: «Իրանահայեր» կայքի յարատեւումը, յատկապէս քամենքների բաժինը, ցուցաբերում է մեր համայնքում չտեսնւած, պարզ ու ազատ խօսքի առկայութիւնը: Գործում են Վեբլոգներ, իհարկէ ոչ շատ աշխոյժ, բայց եւ այնպէս հետաքրքիր է նրանց ներկայութիւնը՝ արդէն երկու անգամ կայացած իրանահայ մամուլի ներկայացուցիչների հանդիպմանը:■

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԻՐԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՀԵՏ

ԻՐԱՆԻ ՄՕՏԵԾՈՒՄԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԱՐԾԻՆ ԴՐԱԿԱՆ Է

- Մեծարգոյ պարոն դեսպան, «Յոյս» երկշաբաթաթերթի խմբագրութիւնը եւ աշխատակիցներն ու ընթերցողները շնորհաւորում են Ձեզ՝ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակուելու առիթով: Շնորհաւորում ենք նաեւ Նոր Տարին եւ Սուրբ Ծնընդեան տօնը, Ձեզ եւ ՀՀ դեսպանութեան աշխատակազմին:

- Շնորհակալութիւն շնորհաւորանքների համար:

-Նոր Տարւայ առիթով ի՞նչ կը ցանկանայիք ասել մեր ընթերցողներին:

-Նոր տարւայ եւ Սուրբ ծննդեան տօների կապակցութեամբ, նախ շնորհաւորում եմ «Յոյս»-ի ընթերցողներին եւ մաղթում քաջառողջութիւն: Իմ ցանկութիւնն է, որպէսզի գալիք 2010 թւականը լինի ձեռքբերումների, յաջողութիւնների, իղձերի կատարման, խաղաղութեան տարի: Թող այլեւս ոչ մի անտրամաբանական կորուստ չխաթարի մեր անդորրը:

-Վերջերս, Կովկասագիտութեան կենտրոնում ելոյթ էք ունեցել, խնդրում ենք ներկայացնել այն խնդիրները, որոնք արծարծել էք ձեր խօսքում:

-Թեհրանի համալսարանին կից Կովկասագիտութեան կենտրոնն առաջարկել էր ելոյթ ունենալ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական յարաբերութիւնների մասին: Ես նպատակայարմար գտայ դասախօսութեանս վերնագիրը ձեւակերպել այսպէս «Հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման եւ բնականոնացման հարցում Երեւանի նախաձեռնութիւնը», քանի որ մինչեւ վերջերս չեն եղել այնպիսի յարաբերութիւններ, որոնց մասին հնարաւոր լինի դասախօսութեան նիւթ կազմել: Նաեւ նշեցի, որ այդ «յարաբերութիւններն» առաւելապէս առնչւում են Հայոց Ցեղասպանութեան խնդրին, ուստի եւ հէնց սկզբից անդրադարձայ այդ թեմային, որից յետոյ ներկայացրեցի յարաբերութիւնների հաստատմանն ուղղուած քայլերի ժամանակագրութիւնը: Նաեւ առաջարկեցի հայ-ադրբեջանական թեմայով կազմակեր-

պել առանձին նիստ, քանի որ այդ երկու թեմաներն ուղղակիօրէն կապւած չեն միմեանց հետ:

-Ինչպիսի՞ն է Հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերմամբ Իրանի դիրքորոշումը: Արդեօք, այդ կապակցութեամբ ՀՀ դեսպանութիւնը խորհրդակցութիւններ՞ է ունենում Իրանի արտաքին գործոց նախարարութեան եւ Իրանում հաւատարմագրւած դեսպանների հետ:

-Այդ խնդրի կապակցութեամբ իրանական կողմը, տարբեր մակարդակներով՝ հրապարակայնօրէն ձեւակերպում է իր դրական մօտեցումը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում եւ ողջունում տարածաշրջանային ցանկացած կնճռի լուծմանը միտւած քայլերը:

“ իրանական կողմը, տարբեր մակարդակներով՝ հրապարակայնօրէն ձեւակերպում է իր դրական մօտեցումը հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում եւ ողջունում տարածաշրջանային ցանկացած կնճռի լուծմանը միտւած քայլերը: ”

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու եւ սահմանները վերաբացելու մասին ստորագրւած արձանագրութիւնների վերաբերեալ պաշտօնական Թեհրանի դրական դիրքորոշումներից բացի, իրանական մամուլի միջոցով շրջանառւել են նաեւ փորձագիտական տեսակէտներ, որոնք հիմնականում դրական են գնահատում այդ գործընթացը եւ գտնում, որ այն չի կարող ստւերի տակ առնել հայ-իրանական յարաբերութիւնները: Օրինակ, իրանցի քաղաքական մեկնաբան Հասան Բեհեշթիփուրը նշում է. «Առաջին հայեացքից թւում է, թէ Հայաստանը Թուրքիայի հետ առնչութիւնները կարգաւորելուց յետոյ, որոշակի վերապահումներ կունենայ Իրանի հետ յարաբերութիւնների հետագայ զարգացման հարցում»: Սակայն, չընդունելով այդ մօտեցումը, իրանցի վերլուծաբանը կարծիք է յայտնում, որ այդ տեսակէտը չի կարելի տրամաբանական համարել, քանի որ հայ-իրանական յարաբերութիւններն աստիճանաբար ձեռք են բերում երկարաժամկէտ, ռազմավարական նշանակութիւն: Երկու երկրների համար էլ,- աւելացնում է մեկնաբանը,- մեծ նշանակութիւն ունեն երկկողմ յարաբերութիւնները: Շարունակելով իր միտքը, վերլուծաբանը յաւելում է. «Իրանին անհրաժեշտ է Հայաստանի ճանապարհը՝ կովկասեան շուկաներին հասու դառնալու համար: Իսկ Հայաստանը, Թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորելուց յետոյ անգամ, շարունակելու է զգալ Իրանի դերակատարութեան կարեւորութիւնը: Ուստի երկու կողմերի համար էլ յարաբերութիւնները կարեւոր են, քանի որ թէ՛ պատմամշակութային եւ թէ՛ աշխարհաքաղաքական ու անվտանգութեան առումներով երկու երկրների յարաբերութիւնները բաւականին սերտ ու անքակտելի են»:

Այդ կարգի վերլուծութիւններ շատ կան իրանական մամուլի էջերում, ինչը համահունչ է նաեւ պաշտօնական տեսակէտին:

-Ողջ հայութեան, ինչպէս եւ իրանահայութեան մտահոգութեան պատճառ են դարձել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրւած արձանագրութիւնը եւ դրան յաջորդած յայտնի «Հայ-թուրքական» յարաբերութիւնների կարգաւորման մասին նախնական համաձայնագիրը:

Թուրքիայի արտաքին գործոց նախարար Դաւթօղլուի եւ Էրդողանի հերթական յայտարարութիւնները՝ սահմանի բացումը պայմանաւորելով Ղարաբաղի ազատագրեալ տարածքների յանձնումով, արդարացնում են կասկածները:

Այս փուլում եւ այս յայտարարութիւնների լոյսի ներքոյ, ինչպիսի՞ն է ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական դիրքորոշումը:

-Այդ հարցի առնչութեամբ Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը, անձամբ նախարար Էդուարդ Նալբանդեանը, ինչպէս նաեւ այլ պաշտօնատար անձինք բազմիցս հանդէս են եկել յայտարարութիւններով: Ելոյթներից մէկի ժամանակ ՀՀ ԱԳ նախարարը յստակ ձեւակերպել է իր միտքը եւ նշել, որ

հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը ղարաբաղեան հիմնահարցի հանգուցալուծմամբ պայմանաւորելու վերաբերեալ թուրք պաշտօնեաների յայտարարութիւնները կարող են դիտուել որպէս բանակցութիւններում արձանագրուած առաջընթացը ձախողելու փորձ: ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արման Կիրակոսեանն էլ ելոյթներից մէկի ժամանակ յայտնել է, որ հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացման եւ ղարաբաղեան հարցի կարգաւորման գործընթացները լրիւ տարբեր գործընթացներ են: Նա յաւելել է, որ հայ-թուրքական յարաբերութիւնները երկու ինքնիշխան պետութիւնների միջեւ յարաբերութիւններ են եւ իրաւական առումով որեւէ առնչութիւն չունեն Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացի հետ: Իսկ ՀՀ Նախագահն զգուշացրել է, որ հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացումը Լեռնային Ղարաբաղի խնդրին շաղկապելու Թուրքիայի փորձերը դատապարտուած են ձախողման: Ահա սա է Հայաստանի պաշտօնական տեսակէտն այդ խնդրի կապակցութեամբ:

> **“ հայ-թուրքական յարաբերութիւնները երկու ինքնիշխան պետութիւնների միջեւ յարաբերութիւններ են եւ իրաւական առումով որեւէ առնչութիւն չունեն Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացի հետ: ”**

-Ժամկէտներ են նշանակուած, հարցը հանգամանօրէն քննարկելու եւ երկու երկրների խորհրդարաններին առ ի վաւերացում ներկայացնելու համար: Ժամկէտները, ինչ խօսք շատ սեղմ են: Արդեօք ՀՀ ղեկավարութիւնը եւ Արտաքին գործոց նախարարութիւնը կարո՞ղ են այս փուլում կամ հետագայ քայլերում կասեցնել պայմանագրի ստորագրումը, եթէ թուրքական կողմը շարունակի թելադրել իր նախապայմանները:

-Ինչպէս դուք Ձեր հարցում նշեցիք, ստորագրուած արձանագրութիւնները պէտք է վաւերացուեն երկու երկրների խորհրդարաններում: Հայ-թուրքական արձանագրութիւնների սահմանադրականութեան հարցը Հայաստանի Սահմանադրական դատարանը կը քննարկի 2010 թ. Յունուարի 12-ին: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուած արձանագրութիւնները Սահմանադրական դատարան է յանձնել Նոյեմբերի 19-ին: Ըստ Սահմանադրութեան, մինչեւ խորհրդարանի կողմից միջազգային պայմանագրի վաւերացումը, Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում ամրագրուած պարտաւորութիւնների համապատասխանութիւնը երկրի հիմնական օրէնքին: Իսկ Թուրքիայի խորհրդարանի վաւերացմանը հայ-թուրքական պայմանագրերը ներկայացուել են Հոկտեմբերի վերջին:

Այդ կապակցութեամբ ՀՀ Նախագահն ընդգծել է, որ արձանագրութիւնների վաւերացման ձգձգումը կարող է խոչընդոտներ յարուցել: Նախագահը յայտարարել է, որ Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստ է պատշաճօրէն կատարելու իր միջազգային պարտաւորութիւնները, այն է՝ վաւերացնելու հայ-թուրքական արձանագրութիւնները, բայց եթէ Թուրքիան ձգձգի արձանագրութիւնների վաւերացումը, ապա Հայաստանը անյապաղ կօգտուի միջազգային իրաւունքից բխող հնարաւորութիւններից: Մէկ այլ առիթով ՀՀ Նախագահն ասել է. «Հայաստանի կառավարութիւնը շարունակում է վաւերացման գործընթացը, սակայն նախապատրաստուում է նաեւ արձանագրութիւնները չեղեալ յայտարարելու հնարաւորութեանը»:

-Ինչպէ՞ս էք մեկնաբանում սփիւռքի բացասական հակազդեցութիւնը «Հայաստան-Թուրքիա» համաձայնագրի հանդէպ: Իրանահայ որոշ ներկայացուցիչների կողմից էլ ձեզ յանձնուեց յուշագիր, որում նշուած էր իրանահայերի մտահոգութիւնների պատճառ դարձած դրոյթները: Կարծում էք, որեւէ ազդեցութիւն կունենա՞յ սփիւռքի կարծիքը ՀՀ արտաքին քաղաքականութեան այս զգայուն հարցում:

-Հայ-թուրքական արձանագրութիւնների հանդէպ Սփիւռքի բացասական հակազդեցութիւնը եւ մտահոգութիւնները հասկանալի են: ՀՀ դեսպանութեանը յանձնուած իրանահայ տարբեր միութիւնների յուշագրերում մանրամասն նշուած են այդ մտահոգութիւնների դրդապատճառները, որոնք բնականաբար փոխանցուել են համապատասխան հասցէներով: Նախքան արձանագրութիւնների ստորագրումը, Հայաստանի Հանրապետութեան Նախագահի աշխարհի հայահոծ քաղաքներ կատարած այցելութիւնները եւ սփիւռքահայութեան հետ հանդիպումներն ու այդ հանդիպումների ժամանակ կազմակերպուած քննարկումները վկայում են, որ Հայաստանի իշխանութիւնները հաշուի են առնում իւրաքանչիւր հայի կարծիքը, լինի Հայաստանում, թէ Սփիւռքում: Հոկտեմբերի 10-ին՝ Ցիւրիխում հայ-թուրքական արձանագրութիւննե-

րի ստորագրումից առաջ հայ ժողովրդին յղած իր ուղերձում, ՀՀ Նախագահը տալիս է Ձեր հարցի պատասխանը: Նախագահ Սերժ Սարգսեանն ասել է, մէջբերում եմ. «Այս գործընթացն առիթ ու խթան հանդիսացաւ նոր՝ շահագրգիռ քննարկում ծաւալելու Հայաստանի եւ հայութեան տեղի ու դերի մասին, Հայաստանի եւ հայութեան ներկայի ու ապագայի մասին: Արդիւնքում, ողջ աշխարհը տեսաւ ու հասկացաւ, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման հարցում գործ ունի ոչ միայն երեք միլիոնանոց Հայաստանի, այլ տաս միլիոնանոց հայ ժողովրդի հետ»: Համայն հայութեանն ուղղուած իր ուղերձում Նախագահ Ս. Սարգսեանը յաւելել է. «Բոլոր մտահոգութիւնները, հնարաւոր վտանգները, որոնք այնքան լիուլի հնչեցուեցին քննարկումների ընթացքում, անհրաժեշտաբար հաշուի են առնուելու»:

-Պարոն դեսպան, երկքաղաքացիութեան դիմողների շրջանակում կայ որոշակի դժգոհութիւններ կապուած անունների սխալ ընթերցումների եւ թարգմանութեան հետ, որը կարծես Սփիւռքի նախարարութեան, Օվիրի եւ Լեզուի Պետական կոմիտէի վերջին որոշումներով փարատուում է: Կայ նաեւ հետեւեալ հարցը, արդեօք երկքաղաքացիութեան օրէնքում նշա՞ծ է թէ դիմողը պիտի ներկայացնի Հայաստանեայց առաքելական եկեղեցում կատարուած մկրտութեթեան փաստաթուղթ: Կարծում ենք, դա հակասում է ՀՀ սահմանադրական օրէնքի դրոյթներին, ըստ որի, պետութիւնը եւ եկեղեցին անջատուած են, եւ կրօնի եւ հաւատքի ազատութիւնը մարդու հիմնարար իրաւունքների շարքում են: Հայ կաթոլիկներն ու բողոքականները ինչպէ՞ս են փաստելու իրենց հայութիւնը, եթէ Օվիրը ընդունում է միայն պաշտօնական եկեղեցու փաստաթուղթը: Երկրորդ, արդեօք ուրիշ երկրներում, ասենք Եւրոպայում եւ Ամերիկայում, ՀՀ դեսպանութիւն դիմում ներկայացնողների առջեւ էլ նման պահա՞նջ է դրւում:

-Ուրախ եմ, որ երկքաղաքացիութեան դիմողների շրջանակում փարատուում են տառադարձութեան հետեւանքով անձնանունների աղաւաղման հետ կապուած մտահոգութիւնները: Ինչ վերաբերում է Ձեր հարցի երկրորդ մասին, ապա պէտք է նշեմ, որ ՀՀ կառավարութեան որոշմամբ սահմանուել է ՀՀ քաղաքացիութիւն ստանալու, ինչպէս նաեւ ՀՀ քաղաքացիութիւնը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարութեան որոշման համապատասխան դրոյթը՝ օտարերկրեայ պետութիւններում ՀՀ հիւպատոսները ՀՀ քաղաքացիութեան համար դիմող անձից կարող են պահանջել ազգութիւնը հաստատող փաստաթուղթ: Այսպիսով, երկքաղաքացիութեան համար դիմողը պէտք է ներկայացնի որեւէ փաստաթուղթ, որը կը փաստի նրա հայ լինելը: Մկրտութեան մասին տեղեկանքն այդ փաստն ապացուցող միջոցներից մէկն է: Ազգային պատկանելիութիւնը փաստող այլ եղանակներ էլ կան: Ի դէպ, ներկայացուած պահանջը վերաբերում է բոլորին, անկախ բնակութեան վայրից:

> **“ Երկքաղաքացիութեան համար դիմողը պէտք է ներկայացնի որեւէ փաստաթուղթ, որը կը փաստի նրա հայ լինելը: Մկրտութեան մասին տեղեկանքն այդ փաստն ապացուցող միջոցներից մէկն է: Ազգային պատկանելիութիւնը փաստող այլ եղանակներ էլ կան: ”**

-Տեղեակ ենք, որ ՀՀ դեսպանութեանն է յանձնուել «Քուշեշ-Դաւթեան» դպրոցի շէնքը: Արդեօք ճի՞շտ է մեր տեղեկութիւնը: Եթէ այո՛, ապա ինչի՞ պիտի ծառայի այսուհետ այդ պատմական շէնքը:

-Դուք իրաւացի էք, կայ մտադրութիւն «Քուշեշ-Դաւթեան» դպրոցի շէնքը վարձակալական հիմունքներով ՀՀ դեսպանութեանը յանձնելու մասին: Բացի այդ, անհրաժեշտ է նաեւ ստանալ իրանական կողմի համաձայնութիւնն այդ պատմական շէնքի գործառոյթը փոխելու եւ որպէս դիւանագիտական ներկայացուցչութիւն օգտագործելու մասին: Կարծում եմ, որ այդ հարցի լուծումը հնարաւոր է: Հեռանկարային առումով, ՀՀ դեսպանութեան տրամադրութեան տակ եղած ներկայիս շէնքը, չի կարող բաւարարել այն պահանջները, որոնք դրուած են մեր առջեւ: Ապագայ դեսպանութեան շէնքն ունի բոլոր հնարաւորութիւնները՝ ներկայացուցչութեան բնականոն աշխատանքը կազմակերպելու համար:

-Շնորհակալութիւն

Ո՞Վ Է ՁՄԵՌ ՊԱՊԸ ԿԱՄ ՍԱՆՏԱ ԿԼԱՈՒՍԸ

Ձմեռ պապիկը, կամ ինչպէս արեւմուտքում ասում են՝ Սանտա Կլաուսը, իրականում հոգեւորական է եղել: Նա Ս. Նիկողայոս Հայրապետն էր: Ժամանակին յոյն Նիկողայոս հայրապետը շրջում էր տնէտուն եւ չքաւոր ընտանիքների պատուհաններին գումար կամ նւէրներ դնում: Ձմեռ պապի կերպարը ծագել է հէնց այստեղից:

«Սանտա Կլաուս» թարգմանաբար Սուրբ Նիկողայոս է նշանակում: Այնպէս որ, Ձմեռ պապի նւէրները մանուկներն իրենց անմեղութեամբ ընդունում են որպէս պարգեւ Աստծուց: Հայ ժողովրդի մէջ ընդունւած է Ամանորը կոչել նաեւ Կաղանդ: Այն նշանակում է որեւէ տօն նշելու կոչ, հրաւէր: Հետագայում կաղանդը Հայաստանում ստացել է տարեմուտի իմաստը: Քրիստոնէական առումով Ամանորը հաշւետւութեան իւրօրինակ մի օր է իւրաքանչիւր մարդու համար: Օր, երբ որ ամփոփւում են տարւայ ընթացքում կատարւած գործերը:

Ս. Ծնունդը աշխարհի քրիստոնեաների ամենամեծ եւ սիրւած տօներից է: Իր թէ՛ նշանակութեամբ, էութեամբ, թէ՛ խորհրդով Ամանորը զիջում է Ս. Ծննդեանը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երեւոյթ է, եւ իր մէջ որեւէ խորհուրդ չունի: Իսկ Ս. Ծնունդը ամբողջութեամբ Խորին Խորհուրդ է՝ Աստծոյ Որդու Ծնունդը, որը մարդկության համար դառնում է նոր եւ անվերջանալի սկիզբ: Իզուր չէ, որ շուրջ 2000 տարի մարդկութիւնը իր տոմարական բոլոր հաշւարկները կապում է Քրիստոսի Ծնունդով՝ նախքան Քրիստոսը եւ Քրիստոսի Ծնունդից յետոյ:

Մաթեմատիկա

Հարցական նշանի փոխարէն ի՞նչ թիւ կարելի է գրել:



Ա-ից Զ ժամացոյցներից որը պէտք է դնել դատարկ տեղում:

Արդեօք կարո՞ղ էք լուցկու հատիկները այնպէս տեղափոխել, որ 16 թիւը ստացւի:

Հարցական նշանի փոխարէն ի՞նչ թիւ կարելի է գրել:



Գիտելիքներ

Արդեօք գիտէ՞ք

Առաջին սովորական մատիտները յայտնուել են 1790 թւականին:

Մարդու մաշկը կշռում է շուրջ 20 կգ., ունի 2 քառ. մետր մակերես, նորոգւում է 28 օրը մէկ

Անեկդոտ

Տղան բանակից նամակ է գրում մօրը եւ ասում է .
- Մամ մի հատ կատու գնիր ու անունը դիր գեներալ, որ գամ խեղդեմ:

Պապ, այ պապ, ոչխարները ամուսնանո՞ւմ են:
- Հա՛, տղայ ջան, հէնց ոչխարնե՛րն են ամուսնանում:

- Ապեր, ծնունդդ ե՞րբ ա:
- Մայիսի եօթին, բա քո՞նը:
- Վալոդի քառասունքին:

ԺԱՄԱՆՑ

Գտէ՛ք երկու նկարի միջեւ առկայ տասնհինգ տարբերութիւնները:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Արքայ չունեն, սակայն արագ
Կազմում են մեծ, ահեղ բանակ,
Հէնց մտնում են արտը հասած՝
Բերքն են հնձում առանց դանակ:

Հսկայական փռում թխած
Մի գաթայ կայ սիրուն, կլոր,
Թխողն ինչքան ծայրից պոկում,
Նորից է նա դառնում կլոր:

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Գծիկներով միացրէ՛ք նշուած համարները:

ՈՒՐԱԽ ԽԱՂԵՐ

Այս նկարում վագրերն իրար վրայ են ընկել. արդեօք կարո՞ղ ես ուշադիր հաշուել եւ ասել, թէ նրանք քանիսն են :

Ներքեւի աջ անկիւնում գտնւող 4 հատուածներից միայն մէկն է իսկական պատկերին պատկանում. ո՞ր հատուածն է դա:

Այս շունը կապւած է քարի՞ն, այս ծառի՞ն թէ՞ այն ծառին: Որոշիր, թէ ո՞րն է ճիշտը:

Ամէն մի գնդակի վրայ մի թիւ է գրւած. դրանցից մէկը զոյգ թիւ է՝ 50-ից փոքր եւ բաժանւում է 7-ի. ո՞րն է դա:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԱՅՐԻ

Մայրին սոճազգիների ընտանիքի ասեղնատերեւ մշտադալար ծառ է: Յայտնի է մայրու 4 տեսակ՝ տարածւած հիւսիսային Աֆրիկայում, Լիբանանում, Թուրքիայում, Հիմալայաներում եւ այլուր: Ղրիմում, Այսրկովկասում, Միջին Ասիայում մշակում են ատլասեան եւ հիմալայեան մայրիները: Հայաստանի Լոռու եւ Տաւուշի մարզերում աճեցւում է հիմալայեան մայրի:
Բարձրութիւնը 25-50 մ. է, բնի տրամագիծը՝ մինչեւ 3 մ. պսակը՝ ցրւած, բրգաձեւ կամ հովանոցաձեւ, ասեղնատերեւները՝ 3-4 կողանի, կոշտ, սուր ծայրով, ծակող, մուգ կանաչից արծաթամոխրագոյն: Կարճ ընձիւղների վրայ ասեղնատերեւները փնջաձեւ են, երկար ընձիւղների վրայ՝ մէկական՝ պարուրաձեւ: Սերմը թունաւոր է, եռանկիւնաձեւ, խէժոտ: Ուտելի չէ: Բնափայտը դեղնաւուն է կամ կարմրաւուն, բուրաւէտ, սնկերի եւ միջատների նկատմամբ՝ կայուն: Գեղազարդիչ է. օգտագործւում է տնակներում, հիմնականում՝ ծառուղիներ ստեղծելիս:
Ռուսաստանում յաճախ մայրի են անւանում սիբիրեան սոճին, որը գեղեցիկ, հզօր, 40 մ. բարձրութեան ծառ է: Ապրում է մինչեւ 500 տարի: Բնափայտն ամուր է, թեթեւ ու գեղեցիկ: Ծառերի խէժից պատրաստում են բեւեկնախէժ եւ բեւեկնաիւղ: Ասեղնատերեւներից պատրաստւած թուրմն օգտագործում են որպէս հակալնդախտային միջոց:
Մայրին համարւում է անմահութեան խորհրդանիշ:

** Հայաստանում մայրի աճեցնում են շատ վաղուց: Հին Հայաստանում յարգի էր փիւնիկեան մայրին: Մ.թ.ա. III դարի վերջին հայոց Երւանդ Դ թագաւորն Ախուրեան գետի ափին տնկել է մայրու անտառ եւ անւանել Ծննդոց անտառ:*
** Մայրու բնափայտից պատրաստել են ռազմակառքեր, նիզակակոթեր, զարդատուփեր:*
** Ըստ աւանդութեան՝ մայրու ծառից է պատրաստւել Նոյեան տապանը:*
** Մայրու տերեւը պատկերւած է Լիբանանի դրօշի վրայ:*

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԻՐԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ԿՆՈՋ՝ ՓԱՌԱՆՁԵՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՀԵՏ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՄ ԻՐԱՆԱՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԵՂՄՈՒԹԻՒՆԸ

ը-Մեզ շատ է հետաքրքրում իմանալ, թէ ինչո՞վ է զբաղւում դեսպանի կինը: Բացի հայ աւանդական կնոջ՝ տնտեսուհու աշխատանքից, ուրիշ ի՞նչ գործերով էք զբաղւում օտար երկրում:

- Տարիներ շարունակ հերթական գործուղումներով եղել ենք այս երկրում, եւ շրջապատուած եմ եղել մտերիմ մարդկանցով, շատ ջերմ վերաբերմունք եմ տեսել իրանահայ կանանց կողմից: Միշտ ուշադրութիւն եւ հոգատարութիւն եմ զգացել: Կային ընտանիքներ, անհատներ, որոնք նեցուկ են եղել մեզ, զաւակներիս կրթական հարցերով են օգնել, միասին տեսարժան վայրեր ենք այցելել, անգամ եթէ առողջական խնդիրներ ենք ունեցել, մեզ ուղեկցել են բժշկի: Ջանձրոյթ չեմ զգացել, բայց կարօտ եւ կտրուածութիւն զգացել եմ, եւ փոքր-ինչ դժւար եմ յարմարւել: Զբաղմունքներ շատ ունեմ. բացի ընթերցանութիւնից, մասնակցում եմ նաեւ հայ համայնքի կողմից կազմակերպւած միջոցառումներին եւ դիւանագիտական համայնքի ընդունելութիւններին:

-Եղե՞լ էք տարբեր երկրներում, ինչպիսի՞ն են ձեր դիտարկումով, հայ կանայք տարբեր երկրներում:

-Շատ տարիներ առաջ գործուղւել ենք Աֆղանստան: Դրանից յետոյ ամուսնուս սկզբունքայնութեան պատճառով, աշխատանքի նպատակով այլ երկրներում չենք եղել, թէպէտ առաջարկներ եղել են, քանի որ ամուսինս համոզւած է, որ մարդ պէտք է աշխատի այն երկրում, որի նրբութիւններին տիրապետում է, յատկապէս լեզուին: Իր խօսքերով՝ կարծես ձուկը ջրում: Չի սիրում, երբ թարգմանչի միջոցով է հաղորդակցւում: Լեզուին տիրապետելու շնորհիւ նա լիարժէքօրէն տեղեկանում է ամենօրեայ նորութիւններին եւ իր խօսքով՝ «թերթերը քամում է»: Նախընտրել է այս երկրում աշխատել, որովհետեւ շատ կարեւոր է համարում Իրանի եւ Հայաստանի կապերի լրջութիւնը, եւ ոչինչ չի խնայում, որպէսզի ամրապնդւեն այդ կապերը:

Իսկ ինչ վերաբերում է հայ կնոջը, ապա կարծում եմ բոլոր երկրներում էլ նրա նիստուկացը, ընտանիքին ու ամուսնուն նւիրւածութիւնը նոյնն է:

-Այդ դէպքում իրանահայ եւ հայաստանցի կնոջ, որի ներկայացուցիչն էք դուք, նմանութիւնները եւ տարբերութիւնը որո՞նք են, ձեր դիտարկմամբ:

-Բնականաբար շատ եմ շփուել իրանահայ կանանց հետ, հենց սկզբից ունեցել եմ ծանօթութիւնների լայն շրջանակ: Կարծիքս շատ դրական է, որովհետեւ, լինելով փոքր համայնք, նաեւ՝ այնպիսի երկրում, ուր կանանց կենցաղը տարբերւում է այլ երկրներում ապրող կանանց կենցաղից, հայ կինը մնացել է իր դիրքում: Սկզբում ես շփուել եմ ամուսնուս ընկերների կանանց հետ: Նրանք ջերմօրէն կապւեցին մեզ հետ. պատրաստակամօրէն օգնում էին ոչ միայն մեզ, այլեւ դեսպանութեան միւս աշխատակիցներին: Երախտագիտութեամբ եմ յիշում այն պահերը, երբ նրանք ինձ հետ եկան եւ օգնեցին արձանագրելու որդուս «Մարիամ» հաստատութեան դպրոցում, ապա «Ռոստոմ»: Նոր երկիր, նոր դպրոց. մի քիչ դըժուար էր:

Իրանի հայ կանանց տարբերութիւնն այն է, որ դժուարութիւններին չեն կարողանում յարմարւել, կարծես սպասելիքները շատ են, որը պայմանաւորուած է երկրի բարեկեցիկ կենցաղով, ու երբ գալիս են Հայաստան, հասարակ, կենցաղային հարցերում պահանջկոտ են դառնում. պէտք է գազը լինի, մշտական ջուրը լինի, հոսանքազրկում չլինի: Այս ամէնով հանդերձ արդէն շատերն են ապրում Հայաստանում եւ ակամայից նրանք էլ են յարմարւում:

-Հայաստանի կենցաղային պայմաններից յետոյ, ինչպիսի՞ն էր այստեղ նոր պայմանները:

-Երբ առաջին անգամ եկայ այստեղ, էներգետիկ ճգնաժամի պատճառով Հայաստանում դաժան էին պայմանները, ոչ միայն կնոջ համար:

Բնակւում էինք 13-րդ յարկում, ջուր չկար, լոյս չկար, ոտքով, երեխաները գրկին, գնումներով ծանրաբեռնւած՝ բարձրանում էինք տուն: Երբ եկայ Իրան, կարծես փրկութիւն լինէր ինձ համար: Գտայ այն պայմանները, որոնցում կինը պէտք է ապրի: Երբ կրկին վերադարձանք Հայրենիք, մի քիչ տրտնջում էի, բայց երեխաներս ուրախութիւնից թռւռում էին հարազատ միջավայրում: Նրանք ամէն ինչին էին կարօտել Հայաստանում, անգամ ժարգոնային լեզուին, որից մինչ այդ նեղւում էին:

-Որեւէ բան սովորե՞լ էք միմեանցից, դուք եւ ձեր իրանահայ ընկերուհիները:

-Գնահատում եմ իրանահայ կանանց մեղմութիւնը, հանգստութիւնը, որը բնորոշ է նաեւ մեր կանանց, թէպէտ Հայաստանում դժուարութիւնները հայ կնոջ կերպարը փոքր-ինչ փոխել են: Կրկնում եմ իրանահայերի կարծիքը, որ զարմացած են հայաստանցի

կնոջ հանդուրժող բնաւորութեամբ, տոկունութեամբ եւ դժուարութիւններին դիմանալու յատկութեամբ:

Այստեղի հայ կանանցից օրինակներ վերցնելու շատ առիթներ եմ ունեցել: Այն, որ ամենայուսահատ պահին էլ կարող ես հանգիստ վերաբերուել դիմացինին, չնեղսրտել, երեխաներին չպարտադրել քո հոգեվիճակը: Շատ արագ էլ իւրացրել եմ իսլամական օրէնքով կնոջ համար նախատեսւած հագուկապի ձեւերը: Իսկ թէ նրանք ի՞նչ են վերցրել ինձանից, դըժուարանում եմ ասել:

-Իրանցի կանանց մասին ի՞նչ կասէք, շփո՞ւմ էք:

-Առիթներ շատ չեմ ունեցել: Նախկինում ապրել ենք մի շէնքում, որի տանտէրը պարսիկ էր: Ծանօթացանք նրա ընտանիքի հետ. իրանցիների կենցաղի մասին մինչ այդ ունեցած իմ պատկերացումները փոխուեցին: Շատ ժամանակակից, հագուստը ճաշակով, պահւածքն ազատ, շատ շնորհքով՝ յատկապէս իրենց պատրաստած կերակուրներով: Իմացայ, որ շատ պարսկուհիներ յատուկ դասընթացների են յաճախում, որպէսզի հիւրասիրութիւնների ժամանակ ուտեստները լինեն առաւել գեղեցիկ ձեւաւորւած եւ ախորժելի: Նրանցից սովորեցի մի քանի կերակրատեսակ, որոնցով Հայաստանում կարողանում եմ զարմացնել հիւրասիրութիւնների ժամանակ, քանի որ մեր խոհանոցը, իրանականի համեմատութեամբ, սահմանափակ բաղադրատոմսեր ունի: Մի խօսքով տպաւորութիւնս դրական է նաեւ պարսիկ կնոջ մասին:

-Իրանցիներին նայելով ընդհանրապէս, ի՞նչը կարող էք առանձնացնել, որը յատկապէս ձեզ դուր է գալիս:

-Ամենաբնորոշ յատկութիւնը մեղմութիւնն է, սիրալիրութիւնը. «թառոֆներ»-ը հաճելի են, դա կեղծիք չէ, քանի որ մարդու հետ շփւելիս, լաւ վերաբերմունքը, մեղմ վարւելաձեւը միշտ էլ հաճելի է դիմացինի համար, որի պակասը փոքր-ինչ նկատելի է Հայաստանում, թէպէտ աստիճանաբար դա էլ է շտկւում:

-Գիտենք, որ գրադարանավարուհի էք: Որտե՞ղ էք սովորել, զբաղւել է՞ք ձեր մասնագիտութեամբ: Ի՞նչպէս էք հայթայթում ձեզ պէտք եղած գրքերը, քանի որ մեր համայնքում չեն աշխատում հանրային գրադարաններ: Առիթ եղե՞լ է օգտւելու ձեր մասնագիտութիւնից, մեր համայնքում:

-Աւարտել եմ Խաչատուր Աբովեանի անւան մանկավարժական համալսարանի գրադարանամատենագիտութեան բաժինը: Իսկապէս սիրել եմ մասնագիտութիւնս, եւ համարում եմ գեղեցիկ մասնագիտութիւն կնոջ համար: Գիրքն ու գրքերի աշխարհն ինձ միշտ էլ հրապուրել են: Իսկ թէ այստեղ ինչպէս եմ կարողանում գիրք հայթայթել, կարող եմ ասել, որ ինտերնետը մասամբ փոխարինում է, սակայն գրքի համն ու հոտը չունի: Առաջարկներ եղել են աստեղ մասնագիտութիւնս օգտագործելու: Թեհրանի Առաջնորդարանում կայ կուտակւած գրականութիւն, որը պէտք է կարգի բերւի, որպէսզի ծառայի նպատակին: Սիրով համաձայնւել եմ օգնել եւ շուտով պէտք է նախաձեռնեմ:

Երբ աւարտեցի համալսարանը, սկզբում աշխատեցի այն գրադարաններում, որոնք բարձիթողի վիճակում էին եւ վերականգնման կարիք ունէին: Երիտասարդ էի, եռանդով լի, սիրում էի աշխատանքս: Երեւանի Չարբախ կոչւող թաղամասում կար մի գրադարան, այսպէս կոչւած՝ «Սան Թանձէի» գրադարանը. վերջինս վրացուհի էր եւ կարելի է ասել՝ գրքամոլ էր: Նա գրեթէ գիրք չէր սպասարկում: Պարզւեց, որ վրացուհին գրքերի նկատմամբ մեծ պաշտամունք ունէր եւ կարծում էր, որ գրքերը կը տանեն, կը վնասեն կամ կը կորցնեն: Երբ նա մահացաւ, ինձ նշանակեցին այնտեղ աշխատելու. տեսայ արժէքաւոր գրքերի մի կոյտ, որոնք յայտնւել էին նկուղում: Մէկ ուրիշ աշխատողի հետ վերականգնեցինք այդ գրադարանը: Որոշ ժամանակ անց «քաղսովետի կուլտուրայի» բաժնից եկան ստուգման, աչքերը լայն բացած նայեցին, տեսան, որ գրքակոյտը վերածւել է գրադարանի: Սկսեցին գովաբանել. հաճելի էր եւ բաւականութիւն էր պատճառում: Անչափ սիրել եմ մասնագիտութիւնս, որը նաեւ մանկավարժական ուղղւածութիւն ունի: Դրանով մենք կրթում,դաստիարակում եւ ընթերցասէր ենք դարձնում սերունդներին: Ընտանիքն էլ կարեւոր է: Երբ տանը երեխաները հետեւում են ծնողներին, նրանց ձեռքին անընդհատ գիրք են տեսնում, իսկ գրադարակներում՝ բազմաթիւ գրքեր, իրենք էլ կրկնօրինակում են եւ կապւում գրքի հետ: Յիշում եմ մի հետաքրքրիր դէպք իմ աշխատանքային կեանքից. գրադարան եկաւ հայերէնի այբբենարանը դեռ չաւարտած առաջին դասարանցի մի երեխայ եւ ասաց.- Ես մի գիրք եմ ուզում, որ մինչեւ **Կ** տառը լինի: Ծիծաղաշարժ էր եւ միաժամանակ յուզիչ:

-Տիկին Առաքելեան, երկու զաւակ ունէք՝ տղայ եւ աղջիկ, Վահէ եւ Շաքէ: Ո՞րտեղ են նրանք, Ի՞նչ են անում եւ այլն:

-Որդիս աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի Իրանագիտութեան բաժինը: Լինելով այս երկրում, ազատ հաղորդակցւում է պարսկերէնով: Այժմ նոյն համալսարանի ասպիրանտ է, գրում է գիտական յօդւածներ եւ պատրաստում իր աւարտաճառը: Միաժամանակ աշխատում է համալսարանում:

Աղջիկս ամուսնացած է: Նա էլ աւարտել է Երեւա-

նի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան ֆակուլտետի Իրանագիտութեան բաժինը: Աշխատում է էներգետիկայի եւ Բնական պաշարների նախարարութիւնում: Այժմ նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի բաժնի պետն է: Իր մասնագիտութիւնը եւ օտար լեզուների իմացութիւնը օգնում են նրան այդ բնագաւառում:

Ձաւակներս սիրում են իրենց մանագիտութիւնն ու աշխատանքը, գտնում են, որ իրենց ընտրութիւնը ճիշտ է:

-Գեղեցիկ ընտրութիւն էք արել անունների հարցում:

- Ուզում էինք անպայման հայկական լինի եւ յարմարեցրել ենք հնչիւնային առումով: *Շաքէ* անունը Հայաստանում քիչ կայ, իսկ այստեղ նկատել եմ՝ շատ է տարածւած: Կարծում եմ հայկական անուն է, թէեւ ծագումը դժւարանում եմ մեկնաբանել: Այդ անւամբ Հայաստանում ջրվէժ կայ:

-Ասեմ, որ *Շաքէ* անունը, որպէս գիւղի, բնակավայրի անուն, վկայւած է 8-րդ դարից մեր մատենագրութիւնում: Թուրքերի կողմից աղաւաղւել եւ *Շաքի* է դարձել: *Շաքէ*ի եւ իր ջրվէժի մասին կայ նաեւ գեղեցիկ աւանդապատում:

-Ինձ համար շատ խորթ են այստեղի անւանակոչումները, որոշ անուններ չափազանց հնարովի են: Այդ առումով էլ քարոզչութիւն պէտք է լինի, ինչքանո՞վ է վատ հայկականը: Իմ անունն էլ Հայաստանում համարում են հնացած եւ այլեւս տարածւած չէ:

-Ինչքանո՞վ էք ապահովւած տեսնում հայ կնոջ իրաւունքները Հայաստանում եւ այստեղ:

-Կնոջ իրաւունքների մասին կարծում եմ պէտք չէ մտածել, թէ նա հասարակութիւնում իր տեղը չունի, իր դերը չունի: Շատ բան է փոխւել. կինը տղամարդուն հաւասար կարող է ունենալ աշխատանք, պաշտօն, ակտիւ լինել բոլոր բնագաւառներում՝ իր խելացիութեամբ ու պատրաստակամութեամբ:

-Չէ որ դեռ կան սահմանափակումներ, տղամարդկանց կողմից, իրենց կնոջ, քրոջ, աղջկայ իրաւունքների հարցերում:

-Դրանք էլ կամաց-կամաց վերանում են: Շփումների պատճառով մարդիկ փոխւում են մտածելակերպով: Ես տեսնում եմ այդ փոփոխութիւնները: Իհարկէ շրջաններում, գիւղական վայրերում կան կանայք, որոնք սահմանափակ կեանքով են ապրում եւ չգիտեն իրենց իրաւունքների մասին, որը, սակայն, չի կարելի ընդհանրացնել: Հիմա մեր կանայք աւելի կրթւած են ու համարձակ նախորդ սերնդի համեմատութեամբ:

- Կա՞ր այնպիսի բան, որին ես չանդրադարձայ կամ մի բան, որ դուք կը ցանկանայիք աւելացնել մեր այս երկար, բայց հաճելի զրոյցին:

-Խօսելով ընտանիքից՝ ցանկանում եմ երկու խօսք աւելացնել նաեւ ամուսնուս մասին: Հայաստանի անկախացումից ի վեր, ջանասիրաբար ու նւիրւածութեամբ կատարել է իր առջեւ դրւած առաքելութիւնը: Զարմանում եմ, որ տարիքի հետ չի պակասել իր եռանդը: Երբեմն, խղճալով ու մտահոգ սպասում եմ ամուսնուս վերադարձին, մտածելով ծանրաբեռւած աշխատանքից յետոյ՝ որքան յոգնած պիտի տուն գայ, յետոյ երբ դուռը բացում ու նայում եմ նրան, տեսնում եմ շատ առոյգ, ակտիւ տուն է մտնում:

-Մի քանի բառով բնութագրէք ձեր ամուսնուն:

-Փորձեմ ասել հակիրճ. անչափ սկզբունքային, բարեխիղճ եւ աշխատասէր: Կարծում եմ այդքանը բաւարար է: Նւիրւած է ընտանիքին, կասէի սրբացնում է: Ինձ դուր է գալիս յատկապէս ամուսնուս նուրբ հիւմորը: Նկատում եմ, որ ցանկացած միջավայրում էլ ընդունւում է այն: Նրա ընդունակութիւնները կարող էին շատ ասպարէզներում դրսեւորւել՝ պատմութեան, գրականագիտութեան, արւեստի, իսկ ամենասիրելի նախասիրութիւնը լեզւաբանութիւնն է:

- Տիկին Փառանձեմ, Ի՞նչ էք ցանկանում մեզ՝ հայերիս, Հայաստանում թէ այլուր, մեր ընթերցողներին եւ իրանահայութեանը Նոր Տարւայ եւ Սուրբ Ծնընդեան տօների շեմին:

-Որտեղ էլ ապրեն հայերը, ուր էլ գնան, թող յաջողակ լինեն ու անհոգ, թող բոլոր դժւարութիւնները մնան անցեալում, թող ոչինչ չխանգարի նրանց՝ երեխաներին կրթելու, դաստիարակելու եւ լաւ մարդ դարձնելու համար:

Սիրելի իրանահայեր, շնորհաւորում եմ ձեր Նոր տարին եւ Ս.Ծնունդը, Ձեզ պատւած այնքան մեծ դրժբախտութիւնները վշտացրել ու անչափ ցաւ են պատճառել բոլորիս եւ չեմ կարող առանց յուզմունքի յիշել կատարւածը: Թող երբեք ու երբեք ցաւալի դէպքեր չկրկնւեն, որոնք մեծ տառապանք պատճառեցին այդքան գնահատելի ու յարգանքի արժանի իրանահայերին:

Ցանկանում եմ, որ ձեր ու մեր՝ բոլորիս բնակարաններում տիրի զւարթ ծիծաղը եւ ուրախ տրամադրութիւնը:

Շնորհաւորում եմ նաեւ «Յոյս»-ին, գալիք տօների կապակցութեամբ: Շնորհակալ եմ, որ հնարաւորութիւն ընձեռնեցիք պարզ եւ անմիջական զրոյց ունենալ ձեր ընթերցողների հետ:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

Նազիկ Աւդալեանը աշխարհի 2009-ի չեմպիոն

Կորէայի Գոյանգ քաղաքում կայացած աշխարհի կանանց մեծահասակների 20-րդ առաջնութիւնում, որին մասնակցում էին աշխարհի 102 երկրներ՝ 1120 մարզիկներով, Հայաստանի ծանրամարտի կանանց թիմը 12 մեդալներ ձեռք բերեց (3 ոսկի, 4 արծաթ եւ 5 բրոնզ): Թէեւ ընդհանուր հաշւով Հայաստանը հանդիսացաւ աշխարհում 4-րդը, սակայն Հայաստանի համար դա համարւում է մեծ նւաճում:

69 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնում էր Նազիկ Աւդալեանը, որ 18 տարի երկարատեւ դադարից յետոյ ծանրամարտի կանանց բաժնում ոսկէ

Նազիկ Աւդալեան

մեդալի արժանացրեց հայրենիքին՝ նւաճելով աշխարհի չեմպիոնի կոչումը:

Այս յաջողութիւնը կարեւոր է նաեւ այն առումով, որ հայ ծանրորդուհու առաջ ծնկի եկան այնպիսի չեմպիոններ, ինչպիսիք էին

չինացի Չուն Հոնգ Լինը, որը Պեկինի օլիմպիական խաղերի առաջին մրցանակակիրն էր եւ Ռուսաստանից Օքսանա Սլիվենկօն, որն աշխարհի վերջին երկու առաջնութիւնների եզակի յաղթականն էր:

Նազիկը պոկում, հրում եւ երկամարտի վարժութիւններում յաջողութեամբ բարձրացրել է հերթականօրէն 119, 147 եւ 266 կգ քաշեր:

Հռիփսիկ Խուրշուդեան

Նազիկի արժանաւոր թիմակիցն էր Եւրոպայի չեմպիոնուհի Հռիփսիկ Խուրշուդեանը, որը հանդէս եկաւ 75 կգ քաշային կարգում եւ իր մեդալների շարքին միաժամանակ աւելացրեց աշխարհի առաջնութեան 3 բրոնզէ մեդալներ:

Նա պոկում վարժանքում բարձրացրեց 120, հրում՝ 147 ու երկամարտում 267 կիլոգրամ:

Գոյանգում միեւնոյն ժամանակ նաեւ տեղի է ունեցել աշխարհի տղամարդկանց 77-րդ մրցաշրջանը, որի ընթացքում Հայաստանի տղամարդկանց ծանրամարտը հանդիսացել է աշխարհում 8-րդը, շահելով 4 արծաթէ եւ 2 բրոնզէ մեդալներ:

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՂՋԻԿ ԵՆ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

Գերմանիայում Ապրիլի 23-ը յայտարարուել է որպէս «Աղջիկների օր»:

Այդ օրը դպրոցական աղջիկները, որպէսզի լայն ծանօթութիւն ձեռք բերեն, այսպէս կոչուած, տղամարդկանց զբաղմունքների վերաբերեալ, մէկօրեայ աշխատանքային վարժութիւններ են անց կացնում: Դա յատկապէս տեղի է ունենում բնագիտական ու տեխնիկական բնագաւառներում, որտեղ աշխատող կանանց թիւը, բնականաբար, աւելի քիչ է տղամարդկանցից:

Այս տարի 9-րդ անգամը լինելով, զանազան ընկերութիւններ, արհեստանոցներ ու գործարաններ, հետազօտական կենտրոններ ու համալսարաններ աշխատանքային վարժեցման մէկօրեայ պարապմունք էին կազմակերպել, որպէսզի կանանց գալիք սերնդի մէջ սէր ու հետաքրքրութիւն առաջացնեն այդ զբաղմունքների հանդէպ:

Այդ օրը,Գերմանիայում, 5-րդից մինչեւ 10-րդ բաժանմունքի աւելի քան 27,000 աշակերտուհիներ այցելում են աշխատանքի զանազան վայրեր եւ ընդգրկուն տեղեկութիւններ ստանում երկաթածուլման սարքերի, ուղղաթիռով թռչելու, համակարգչային ծրագրերի եւ մեքենաշինութեան տարբեր մասերի պատրաստման վերաբերեալ:

Տղամարդկանց զբաղմունքների հետ կանանց ծանօթացման մէկօրեայ ծրագրի համադրող մարմնի պատասխանատու Քարմէն Ռոֆերի ասութեամբ, այդ օրը նախատեսուել է դպրոցական աշակերտուհիներին ծանօթացնել աւելի քան 9,000 զանազան արհեստների: Հակառակ տնտեսական ճգնաժամային դրութեան, աշխատանքային կենտրոնները, ընկերութիւնները հաճոյքով են ընդունում աշակերտուհիներին: Նա այնուհետեւ նշում է, թէ նուրբ սեռի համար արհեստագիտական ուժի աճի ու զարգացման հնարաւորութիւններ ստեղծելը կարեւոր գործօններից մէկն է Գերմանիայի ապագայ տնտեսութեան համար:

«Մայնս» բարձրագոյն արհեստագիտական կենտրոնի համակարգչային ծրագրաւորման եւ ինտերնետային դիսկերի պատրաստման բաժինը այն վայրերից էր, որտեղ այցելեցին 7-րդից մինչեւ 10-րդ դասարանների աղջիկները՝ մէկօրեայ փորձագիտական ծրագրեր իրականացնելու նպատակով:

Գերմանիայի ZDF հեռուստաալիքի 2-րդ ցանցի շէնքում եւս համախմբուել էին 320 աշակերտուհիներ՝ ծանօթանալու համար հեռուստացուցային հաղորդումների պատրաստման եւ տեխնիկական զանազան բաժիններին: Գերմանիայի ընտանիքի նախարարն այս կապակցութեամբ նշել է, թէ հակառակ նրան, որ աղջիկները բարձր գնահատականներով են աւարտում դպրոցական շրջանը, սակայն նրանցից շատերը խուսափում են բնական գիտութիւնների ու տեխնիկական մասնագիտու-

ՆԵՐԸ ԾԱՆՕԹԱՆՈՒՄ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻՆ

թիւններով զբաղուելուց:

«Աղջիկների օրը» այն բացառիկ օրն է, որի ընթացքում նրանց փաստօրէն ցուցադրւում է, թէ այդ բնագաւառներում կարող են դրսեւորել իրենց ընդունակութիւնները:

Միեւնոյն նպատակով, որպէսզի տղաները եւս այդ նոյն օրը ծանօթանան, այսպէս կոչւած, կանացի զբաղմունքներին, նրանց համար էլ նոյնպիսի ծրագրեր են մշակւել սպասարկուութեան, դաստիարակչական, սանիտարական, եւ տարիքաւորներին օժանդակելու եւ խնամելու զանազան կենտրոններում:

Այս ծրագիրը, որը կոչւում է «Նոր ուղիներ տղաների համար», մշակւել ու գործադրւել է 2005 թւականից՝ տղամարդկանց զբաղմունքներին աղջիկների ծանօթանալու ծրագրին զուգընթաց:

Այս տարի «Աղջիկների օրւայ» առթիւ Նորդ Ռայն Վեստ Ֆալէն նահանգում 5-րդ դասարանի 26,000 աշակերտուհիներ մասնակցեցին յիշեալ ծրագրերին: Աշակերտական տարբեր խմբեր ներկայ գտնւեցին Դոչէվելէի շէնքում եւ մօտից ծանօթացան ռադիոյի ծրագրերի ձայնագրման ու նաեւ ինտերնետային կայքերի նիւթերի պատրաստման գործին:

Առաջին անգամ 1993 թւականին Ամերիկայի Նիւ Օրլէան նահանգում մի խումբ կանայք հնարամտութիւն գործ դրեցին եւ առաջարկեցին հայրերը աղջիկներին ծանօթացնեն իրենց զբաղմունքներին ու աշխատավայրերին՝ նպատակ հետապնդելով աղջիկներին ծանօթացնել տեխնիկական գործերին ու արդիւնաբերական զբաղմունքներին, եւ այդպիսով նրանց մէջ սէր ու համակրանք առաջացնել դրանց նկատմամբ:

2000 թւականին, այս գաղափարն արծարծւեց Գերմանիայում եւ այնուհետեւ յաջորդ տարւանից սկսւեց գործադրւել:

Տեխնիկայով զբաղւող ընկերութիւններն ընդառաջեցին եւ հովանաւորեցին այդ նախագիծը, որն այժմ ծրագրաւորւել է Գերմանիայի կրթութեան ու մշակոյթի նախարարութեան կողմից եւ տարէցտարի աճում ու բազմանում են աշխատանքային ու արհեստակցական այն կենտրոնները, որոնք պատրաստակամութիւն են յայտնում եւ համագործակցում են այդ ծրագրերի իրականացման համար:

«Աղջիկների օրւայ» ծրագրի կազմակերպիչները համոզւած են, որ աղջիկների ծանօթանալը տղամարդկանց աւանդական արհեստներին ու աշխատանքային միջավայրին, նրանց կը դրդի ու կը խրախուսի ապագայում զբաղւել այդ գործերով: Այս ծրագրի գործադրումը առիթ կը տայ աղջիկներին՝ իրենց ապագայ մասնագիտութիւնն ընտրեն գիտակցաբար եւ ոչ թէ հէնց այնպէս, պարզապէս մղւելով վարսայարդարման, հիւանդապահութեան, վաճառորդութեան կամ գրասենեակային աշխատանքների պէս կանացի աւանդական արհեստներին:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ

«...կնկանն անվայել է եկեղեցում խօսել»

Տէր Մուշեղ Աւետեան

Կանանց իրաւունքների հարցը շատ հետաքրքիր թեմա է. Կանանց իրաւունքները ոչ թէ միայն հասարակական կեանքում, այլ Սուրբ գրքում նաեւ անտեսւած է, մի քանի օրինակներ Նոր Կտակարանից :

Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթ Առ Կորնթացիս Գլուխ (ժդ)14 համար 34-35

34- Ձեր Կանայքը եկեղեցիներումը լուռ կենան. Որովհետեւ նրանց հրաման չ'կայ խօսելու, այլ որ հնազանդ լինեն, ինչպէս օրէնքն էլ ասում է: (Ո՞ր օրէնքն է ասում, եւ ի՞նչ է ասում:)

35- Բայց եթէ մի բան կամենան սովորիլ, թող տան մէջ իրանց մարդկանցից հարցնեն. Որովհետեւ կնկանն անվայել է եկեղեցում խօսել: (Բայց ինչպէ՞ս են կիները կարողանում եկեղեցում երգել:)

Եթէ այսպէս ենթադրենք, որ՝

1- Կնոջ ամուսինն գաղափար չունենայ կրօնի մասին:

2-Կնոջ ամուսինն մահացած լինի:

Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթը Առ Տիմոթէոս Գլուխ Բ համար 12-14

12-Կնկան հրաման չեմ տալիս, որ սովորեցնէ, եւ ոչ էլ մարդին վրայ իշխէ, այլ որ լուռ կենայ:

13- Որովհետեւ Ադամն առաջ ստեղծուեցաւ եւ յետոյ Եւան :

14- Եւ Ադամը չխաբուեցաւ, այլ կինը խաբուելով մեղք գործեց :

Պօղոս Առաքեալի Երկրորդ Թուղթը Առ Տիմոթէոս Գլուխ Գ համար 6-7

6-Որովհետեւ սրանցից են, որ տունէ տուն են մըտնում, եւ գերի անում մեղքերով բեռնաւորուած տկարամիտ կընիկներին, որ կերպ-կերպ ցանկութիւններով տարուած են :

7-Որ ամեն ժամանակ սովորում են, եւ երբեք դէպի ճշմարտութեան գիտութիւնը չեն կարողանում գալ:

Սիրելի ԿԱՆԱՅՔ այսպէս է ասւած ձեր իրաւունքների մասին:

ԹԵՀՐԱՆԸ՝ ԹԱՓՕՆՆԵՐԻ ԳԵՐԻ



Թափօնների ու աւելցուկների ծաւալը ահռելի չափերի է հասել ողջ աշխարհում, որից ձերբազատելը մեծ մտահոգութիւն է դարձել բոլոր երկրների համար:

Թեհրանի աղբերի մասին առկայ վիճակագրական տեւալներին իսկ մի հայեացք նետելով, կարելի է պարզ պատկերացում կազմել համընդհանուր չարիքի մասին:

Թեհրանի օրական աղբագոյացումը հասնում է 7500 տոննայի, որից 70 տոկոսը թաց, իսկ 30 տոկոսը չոր եւ օգտագործելի է: Թեհրան քաղաքի աղբերի քանակը ամսական՝ 225000 տոննա, իսկ տարեկան՝ 2,737,500 տոննա է կազմում:

Իւրաքանչիւր թեհրանցի տարեկան 342 կիլոգրամ աղբ է արտադրում, իսկ իւրաքանչիւր ընտանիք՝ 1300 կգ:

Թեհրանի բնակիչների արտանետած աղբի մաս են կազմում տարեկան 92856 տոննա պլաստմասսա, 52231 տոննա ապակի, 60563 տոննա թուղթ ու ստուրաթուղթ, եւ 25148 տոննա զանազան տեսակի մետաղներ, որոնք ենթակայ են վերամշակման:

Արդեօք գիտէ՞ք, թէ աղբերն ու թափօնները բաժանւում են 5 տեսակի: Դրանք են՝ բնակարանային աղբեր, շինարարական աւելցուկներ, հիւանդանոցային թափօններ եւ գիւղատնտեսական ու արդիւնաբերական աւելցուկներ ու արտանետումներ:

-Եթէ հաշւի առնենք իւրաքանչիւր անհատի դուրս նետած թղթի ծաւալը, դա կը հաւասարւի 1.5 ծառի, իսկ ամբողջ երկրի բնակչութեան օգտագործած թղթերի չափը նկատի առնելու դէպքում, կը գոյանայ աւելի քան 100 միլիոն ծառ:

-Աղբերից առանձնացւած մէկանգամեայ գործածւող իրերից ու ամաններից 1 տոննա ալիւմին վերստանալու եւ վերօգտագործելու դէպքում, կարելի է խնայել 400 տոննա հանքաքար, 700 կգ կոկ եւ բիտում:

-Այսօրւայ դուրս նետած ապակին, հաւանաբար 1000 տարի իր գոյութիւնը պահպանելու է երկրագնդի վրայ, մինչդեռ ամէն մի տոննա ապակի վերամշակելով կարելի է խնայել շուրջ 120 լիտր նաւթ:

-240 տարի տեւում է, մինչեւ պլաստմասսայէ մէկ տոպրակը քայքայւի եւ ոչնչանայ:

-Շինարարական տականքներից օգտւելով կարելի է բաւական խորափոր տարածքներ ու վիհեր լցնել եւ հարթեցնել:

-Բեռնատար մեքենաների անւադող պատրաստելու համար մօտ կէս տակառ հում նաւթ է գործածւում:

-Թղթի վերամշակումը շատ օգուտներ ունի, այդ թւում նաեւ թղթէ ծառերի պատրաստումը:

-Յիրաւի, քանի՞ քառակուսի կիլոմետր տարածք է հարկաւոր, որպէսզի հնարաւոր լինի այդքան աղբը թաղել գետնի տակ:

ՄԱԿ-ի բնապահպանութեան ծրագրերի գործակալութիւնը յայտարարել է, որ «Կանաչ էներգիաների» բնագաւառում 2007 թւականի ներդրումները հասել է 148 միլիարդ դոլարի, որը 2006 թւականի համեմատ մօտ 60 տոկոս աճ է արձանագրել: Այս ներդրումների աճի պատճառը նաւթի գնի բարձրացումն է, էներգիայի ապահովութեան եւ կլիմայական փոփոխութիւնների, ինչպէս նաեւ այդ կարգի էներգակիրների վերաբերեալ պետութեան մտահոգութիւնը: Հետաքրքիր է, որ ներդրումների խոշոր մասը կատարուել է հողմաէներգետիկայի բնագաւառում:

Այս գործակալութեան զեկոյցի համաձայն, ներդրումների չափը 2012 թւականին հասնելու է տարեկան 450 միլիոն դոլարի, որ 2020 թւականին այն կը լինի շուրջ 600 միլիարդ դոլար: Դարձեալ նոյն զեկոյցի համաձայն, 2007 թւին, խոշորագոյն ներդրումները պատկանում են Եւրոպային, իսկ Ամերիկան այս տեսակէտից միայն 8-րդ տեղն է գրաւում: Չինաստանը, Հնդկաստանը եւ Բրազիլիան միայն 26 միլիարդ դոլար են յատկացրել այս բնագաւառին:

Հետաքրքիր է իմանալ, որ Մեծ Բրիտանիայի էներգետիկայի նախարար Մալքոմ Վիքսը նշել է, թէ իր երկիրը որոշում ունի «Կանաչ յեղափոխութեան» բնագաւառում 200 միլիարդ դոլար ներդրումներ կատարել, որպէսզի հնարաւոր լինի այս ծրագրի շրջանակում երկրի բնակարանների մէկ չորրորդը ջերմացնել արեգակնային էներգիայի համակարգով, ապա եւ միացնել հազարաւոր նոր հողմային տուրբիններ:

Վիճակագրական տուեալների համաձայն, Գերմանիան հողմաէներգետիկայի արտադրման տեսակէտից աշխարհում առաջին տեղն է գրաւում եւ մօտ 22000 մեգավատ էներգիա արտադրելով կարողացել է իր պահանջած էներգիան արտադրել տուրբինների միջոցով:

Այսոուհանդերձ, Գերմանիայի կառավարութիւնը նպատակասլաց մի ծրագրի ընթացքում որո-

շել է մինչեւ 2020 թւականը ցամաքից բացի, ծովում եւս տուրբիններ տեղադրելով, 10000 մեգավատ հողմային էլեկտրականութիւն ապահովել: Որպէս քաջալերանք այս բնագաւառում ներդրում կատարողներին, պետութիւնը այս տեխնոլոգիայի միջոցով արտադրւած կիլովատ ժամ էլեկտրականութեան դիմաց սուբսիդան աւելացրել է 9-15 սենտով:

Այս կապակցութեամբ Ամերիկայի էներգետիկայի նախարարը յայտարարել է, թէ որոշում կայ մինչեւ 2030 թւականը այս երկրի սպառող էլեկտրականութեան 30 տոկոսն ապահովել հողմակայանների միջոցով, որով կը խնայւի տարեկան սպառող բնական գազի 11 տոկոսը եւ ածխաքարի 18 տոկոսը, որ նշանակում է, թէ այդպիսով կը նւազի նաեւ մեծածաւալ ածխագազի տարածումը: Ի դէպ, այսպիսով կարելի է արտադրող էլեկտրականութեան գինը կէս սենտից էլ աւել պակասեցնել:

Այս հիմամբ, Ամերիկայի սեփական ձեռնարկութիւններից մէկը յայտարարել է, թէ մտադիր է

հողմաէներգետիկայի բնագաւառում աւելի քան 2 միլիարդ դոլար ներդրում կատարել: Եւ վերջապէս այս բոլորը վկայում են այն մասին, թէ հողմային էներգիայի օգտագործման ծաւալը մեծանում է արդիւնաբերութեան բնագաւառում, որը տեղի է ունենում երկու ձեւով՝ մէկը նոր վայրերում նոր տուրբինների միացմամբ, իսկ միւսը՝ հին հողմային ագարակներում, նախկիններին փոխարէն աւելի մեծ ու արդիական տուրբիններ տեղադրելով:

Հին տուրբինների վերամշակման եղանակներից մէկը՝ այլ երկրներ ուղարկելն է, բայց փոխադրական միջոցների ու տեղադրման բարձր ծախսերի, ինչպէս նաեւ պահանջւած ու անհրաժեշտ գիտելիքներին տիրապետելու պատճառով, այս տարբերակն այնքան էլ ցանկալի չէ: Իհարկէ, պիտի նշել, որ հողմաէներգետիկայի խիստ պահանջը պատճառ է եղել, որ հին տուրբինները մեծ պահանջարկ գտնեն արդիւնաբերական երկրներում, որն էլ առիթ է հանդիսացել, որպէսզի նորանոր ընկերութիւններ կեանքի կոչեն այդ տուրբինների վերամշակման

ու վերօգտագործման նպատակով:

Մինչ արդիւնաբերական զարգացած երկրներում խօսում են հին սերնդի հողմային տուրբիններոը շարքից հանելու մասին, մեր երկրում դեռեւս նման տուրբիններ օգտագործելու միտքը չի հասունացել, եւ այդ տեսակէտից թերեւս մենք 2-3 տասնամեակ հեռու ենք այլ երկրներից, եւ թւում է, թէ պէտք է շտապենք՝ նրանց հասնելու:

Ամերիկեան Aeronautica Windpower ընկերութիւնը այն կարծիքին է, որ տուրբինների վերամշակումը «Կանաչ գործողութիւն» է, իսկ հողմային տուրբինները՝ «Կանաչ էներգիայի» արտադրողներ, դրա համար էլ յիշեալ ընկերութիւնը որոշել է Կալիֆոռնիայում հին տուրբինները վերանորոգել եւ նոր վայրեր գտնել նրանց օգտագործման համար:

Այս ընկերութիւնը խոստացել է, թէ կարող է 50-500 կիլովատանոց այդ տուրբինների համար շահագործման նոր վայրեր գտնել, որպէսզի դրանց փոխարէն աւելի մեծ տուրբիններ տեղադրեն: 1980-90 թւականներին տեղադրուած աւելի քան 10 հազար տուրբիններ, շուտով պէտք է փոխարինեն աւելի մեծ եւ մոդեռն տուրբիններով, քանի որ եթէ այս գործընթացը տեղի չունենայ, արտադրութեան շատ տարողութիւններ կոչնչանան:

Յիշեալ ընկերութեան մարկետինգի բաժնի օգնական Բրայան Քոհէնն ասել է.«Թէեւ խոշոր տուրբինների կարիքը շատ է զգացւում հողմակայաններում, բայց եւ այնպէս, միջին չափի տուրբինները եւս կարող են բաւարարել գիւղացիների, դպրոցների, գիւղերի եւ առեւտրական ու արդիւնաբերական կենտրոնների էլեկտրական հոսանքի կարիքները»:

Այս ընկերութիւնը յուսով է, որ այդ տուրբինների կեանքի 2-րդ շրջանում կարելի կը լինի օգտագործել լաւագոյն կցամասերից, ապա եւ վերարտադրող էներգիայից: Այդ հողմային տուրբիններից որոշները հրասայլի կամ ինքնաթիռի նման են եւ վերամշակման համար հարկաւոր է որոշ մասերը բացել, փոխել ու կառուցել նոր տեխնոլոգիայով, որովհետեւ դրանց պատրաստման ժամանակ, այդ մասերը դեռ գոյութիւն չունէին: Օրինակ՝ ընկերութիւնը մտադիր է նոր էլեկտրոնիկական սարքեր կիրառել դրանց մէջ, որպէսզի կարելի լինի այդ տուրբինները միացնել ինտերնետին եւ հսկողութեան տակ առնել դրանց գործողութեան էութիւնն ու արտադրութեան կարգավիճակը:

Այս ուղղութեամբ արդէն մի քանի վերանորոգման աշխատանքներ յանձնարարուել է յիշեալ ընկերութեան, ու թէեւ մեծ տուրբինների տեղափոխումը Կալիֆոռնիայից Մասաչուսետ հսկայական ծախսերի է նայում, բայց այդ բոլորով հանդերձ, վերանորոգւած տուրբինների վաճառքի գինը 80-ից մինչեւ 120,000 դոլար է: Ըստ մասնագէտների, միջին չափի տուրբինների շուկան չպէտք է անտեսւի դրանց պատրաստողների կողմից, քանի որ դրանք աշխատանքի շահաւէտ հեռանկարներ ունեն, եւ հողմային տուրբինների վրայ ներդրումներ կատարելը, ընդհանրապէս, 4-5 տարւայ ընթացքում ծախսերը արդարացնում է եւ այնուհետեւ ձրի էլեկտրականութիւն է ստացւում:

Նշելի է, որ անցեալ տարի հողմաէներգետիկայի բաժինը աշխարհի էլեկտրականութեան արտադրութեան նոր տարողութիւններ ստեղծելու տեսակէտից, աւելի քան 25 տոկոս է կազմել:

Արտադրել է հեռախօս՝ արեւային մարտկոցով

Կորէական SAMSUNG ընկերութիւնը յայտարարել է էկոլոգիայի տեսակէտից անվնաս մի հեռախօսի արտադրման մասին, որը կոչւում է Blue Earth: Այն պատրաստուել է վերամշակուած պլաստմասսայից եւ աշխատում է արեւային մարտկոցներով: Այս բջջային հեռախօսը ներկայացուել է Բարսելոնայում կայացած Բջջայինի համաշխարհային համաժողովում:

Ընկերութեան հաւաստմամբ, Blue Earth-ը սենսորային էկրանով առաջին բջջային հեռախօսն է աշխարհում, որն աշխատում է արեւային մարտկոցով: Աւելին, հեռախօսն արտադրելիս նրանում վնասակար նիւթեր չեն օգտագործուել: Արեւային մարտկոցները SAMSUNG Blue Earth- ի համար պահեստային են: Դրանք կարելի է օգտագործել իսկական մարտկոցների լիցքաթափման դէպքում:

Blue Earth-ի վրայ յատուկ ինտերֆէյս է տեղադրուել, որ հեռախօսն օգտագործողի ուշադրութիւնը հրաւիրում է շրջակայ միջավայրի պահպանման խնդրին, եւ դեռ աւելին, այդ նպատակով յատուկ պարտաւորութիւններ են իրացուել: Այսպէս, ընդամէնը մէկ սեղմումով կարելի է հեռախօսը դնել էներգախնայման վիճակում:

Blue Earth-ից օգտուողը կարող է իմանալ, թէ քանի քայլ է արել օրուայ ընթացքում: Հեռախօսն անգամ կարող է հաշուարկել եւ պարզել, թէ որքան ածխաթթու գազ կարտանետուէր, եթէ անցած ճանապարհը գնային ոչ թէ ոտքով, այլ ինքնաշարժով:

Կլոնաւորուած ձուկ է ստացուել

Ճապոնացի ու գերմանացի գիտնականները գտել են, որ եթէ ճապոնական «մեդկա» ձկան մաշկի գոյնի գէնը բարեփոխեն, նրա սրճագոյն կամ նարնջագոյն մաշկը կը վերածւի գորշագոյնի, որը վանողականութիւն կառաջացնի հակառակ սեռի ձկների մէջ եւ այդ ձուկը այլեւս դժուար թէ կարողանայ յարմար զոյգ ընտրել իր համար: Սակայն, գիտնականները գտնելով նաեւ, որ գոյնի գործօնի գէնը, որը կոչւում է գինգեր, բարձրացնում է վերոյիշեալ ձկան յարմար զոյգ գտնելու յաջողութեան տոկոսը, նրանք կարողացել են այդ գինգեր կոչւած գէնը կլոնաւորելով, ձկան գոյնը դարձնել շատ աւելի գրաւիչ նարնջագոյն, որի արդիւնքում կլոնաւորուած ձուկը չափազանց համակրելի ու գրաւիչ է դարձել հակառակ սեռի ձկների կողմից եւ կարողացել է աւելի յարմար զոյգ գտնել:

Աւետ տ՞ս, աւետ՞ս

Շաքէ Ա. Պետրոսեան

Հին լաւ օրերում, մայր հայրենիքում կամ գաղթօջախներում, գիւղերում ու քաղաքներում հայերը մեծ խանդավառութեամբ էին պատրաստւում Նոր Տարւայ եւ Սուրբ Ծննդեան տօներին:

Գաթան ու նազուկը, տարեհացը, ձաւարով փլաւը պատրաստում էին Նոր Տարւայ սեղանի համար, իսկ ձուկն ու գինին Զրօրհնէքի՝ Սուրբ Ծննդեան տօնի երեկոյեան էին վայելում, փառաբանելով Յիսուս Քրիստոսի ծնունդը:

Ս. Ծննդեան Ճրագալոյցի, պատարագի ու հաղորդութեան աւարտին, երեխաները «շապիկ» հագած, կոչնակներով պտտում էին գիւղի կամ քաղաքի փողոցներում ու քաղցր ու զիլ ձայնով երգում աւետիսի երգեր:

5-րդ դարից սկսած հայ եկեղեցու հայրերի կողմից գրաբարով Ծննդեան Աւետիսների ու այլ շարականների յօրինումով, հայ ժողովուրդն էլ յուզիչ ու անպաճոյճ աւետիսներ էր ստեղծում ռամկական լեզուով ու տօնական այդ օրերին երգում էր:

Ահա, Նոր Տարւայ մի Աւետիս, որը երգւում էր Վանում:

Շնորհաւոր տօն ու տարին,
Նոր Կաղանդն եւ իւր բարին,
Պատ վեր խման, խիմ վեր քարին,
Վէմ քարն ի Պօղոս Պետրոս
Բանլիս տւեց Փրկիչ Յիսուս:
Տունը շէն, շէն շինական,
Իւղն ու բլիթ նստան, կերան:
.....
.....
Եւ վերջում,
Ուտենք խմենք անոյշ գինին,
Ասենք օղորմին, ողջութեան հայոց ազգին:

Ներսէս Շնորհալի հայրապետի (12-րդ դար) գրչին պատկանող այս աւետիսը գրւել է միջին հայերէնով, պարզ ու մօտ ժողովրդական լեզուին:

Տաղ Ծննդեան

Այսօր տօն է սուրբ Ծննդեան, աւետիս.
Տեառն մերոյ եւ յայտնութեան. աւետիս;
Այսօր արեւն արդարութեան. աւետիս.
Երեւեցաւ ի մէջ մարդկան. աւետիս.
Այսօր Ս. Կոյսն անապական. աւետիս,
Ծնաւ, եբեր զանմահ արքայն. աւետիս:
Այսօր հրեշտակք յերկնից իջան. աւետիս.
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. աւետիս:
Այսօր դժոխքն սարսեցան. աւետիս.
Գունդքք դիւաց յոյժ տրտմեցան. աւետիս:

Ողջ քրիստոնեայ աշխարհը տօնում է Յիսուսի Ս.Ծնունդը: Կաթոլիկ եւ բողոքական եկեղեցիները՝ Դեկտեմբերի 25-ին, իսկ հայերը՝ Յունւարի 5-ին:

Նախքան Քրիստոսի Ծնունդը Պարսկաստանում, Հայաստանում, Փոքր Ասիայում եւ մինչեւ Հռոմ տարածուած էր Միթրայի պաշտամունքը: Միթրայի խորհրդանիշը արեւն էր, որն սկսում էր բարձրանալ Դեկտեմբերի 21-ին՝ Ձմեռնամուտին: Միթրայի ծննդեան տօնը տեւում էր 12 օր:

4-5-րդ դարերից սկսած, ըստ եկեղեցու հայրերի որոշումների, որոնք տրւում էին տիեզերական ժողովներում, Հռոմի եկեղեցին ընդունեց Դեկտեմբերի 25-ը, իսկ Արեւելեան եկեղեցիներից՝ հայկականը ընդունեց Յունուար 5-ը, որպէս Քրիստոսի Ծնունդ, որոնք համապատասխանում են Միթրայի 12-օրեայ տօների սկզբին եւ վերջին:

Բայց, կարդացէք այս անգլիական աւետիս-քարոզը եւ կը տեսնէք, որ ժողովուրդը իր յիշողութեան մէջ պահպանում է բաներ, որոնք չեն ենթարկւում ոչ մի տիեզերական ժողովի որոշումների, քանզի ժողովուրդն ունի իր օրէնքներն ու իր աւանդական սովորոյթները, որոնք արհեստականօրէն ոչնչացւելով հանդերձ, դարձեալ երեւան են գալիս անսպասելիօրէն:

Բալենու այգու աւետիսը

Յովսէփը տարեց մի այր էր,
այր մի տարեց.
Նա ամուսնացաւ Գալիլիայի կոյս
Մարիամի հետ:
Երբ Մարիամը եւ Յովսէփը զբօսնում էին
Բալենու այգում՝
Պատահեց այնպէս, որ մոլորւեցին
Բալենու այգում;
Այնժամ Մարիամն ասաց.-
Մեղմօրէն ու հեզ,
- Յովսէփ, քաղիր ինձ համար
Մի քիչ բալ,
Քանզի, ես երեխայով եմ:
Յովսէփը բարկացաւ,
Շատ բարկացաւ նա.
- Թող քո զաւակի հայրը քաղի
Նրա համար բալ;
Այնժամ բարձրաձայն խօսեց Տէրն Յիսուս
Արգանդից իր մօր.
- Խոնարհւեցէք ներքեւ, բալենիներ,
Գետին խոնարհւեցէք
Եւ բալենիները գետին խոնարհւեցին,
Գետին խոնարհւեցին.
Եւ Մարիամը բալ քաղեց՝
Մինչ Յովսէփը կանգնել էր իր մօտ:
Այնժամ ծունկի իջաւ Յովսէփը,
եւ հարց տւեց նա.
- Ասա, ինձ գեղեցիկ մանուկ,
Ե՞րբ է լինելու ծնունդը քո.
- Յունւարի 5-ին, կը լինի ծնունդն իմ
Եւ երկնքում կը խոնարհւեն
Աստղերն իմ առջեւ:

فهرست مطالب این شماره

خبرهای جامعه ارامنه ایران		۲
شادباش سال نو	عاشق زادوراغلی	۴
ارامنه ایران در سال ۲۰۰۹		۸
مصاحبه با گریگور اراکلیان سفیر ارمنستان در ایران	شاکه پطرسیان	۱۳
بخش کودکان	آگنس آذریان	۱۷
مصاحبه با پاراندزم گریگوریان همسر سفیر ارمنستان در ایران	شاکه پطرسیان	۲۱
نازیک اودالیان قهرمان وزنه برداری زنان جهان		۲۵
دخترهای آلمانی با مشاغل مردانه آشنا می‌شوند		۲۶
حقوق زنان در کتاب مقدس	موشق اودیان	۲۷
تهران اسیر زباله		۲۸
آینده انرژی سبز		۲۹
گوناگون		۳۲
بشارت، بشارت	شاکه پطرسیان	۳۳
سرگرمی		۳۶

دوهفته‌نامه اجتماعی فرهنگی

هویس

شماره ۶۵، ۲ دی ۱۳۸۸

شادباش سال نو

صاحب امتیاز و مدیر مسئول: لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان، لیا خاچکیان،

آندرانیک حجومیان، گارون سرکیسیان، آندرانیک سیمونیان،

وانه پطروسیان، کولیا در هوانسیان

مدیرهنری: لیا خاچکیان

مسئول امور بازرگانی: آگنس آذریان

تهران، خیابان انقلاب، بین ولی عصر و فلسطین، شماره ۱۰۲۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

hooys@inbox.com

Տնօրէն : Խաչիկ Քէշիշ

ارائه کلیه خدمات بیمه ای

Tel : 77 84 30 25 - 77 82 39 86

Fax : 77 84 30 27

آدرس : تهران ، خیابان دماوند ، ایستگاه پل سیمل

داود گلشن دوست (باختر) ، کوچه پنجم ،

پلاک ۵۴ کد پستی : ۱۶۴۵۹-۱۶۸۵۱

بیمه آسیا

کد نمایندگی : ۰۷۱۶

شرکت خدمات مسافرت هوائی شعاع گشت

SHO-AA GASHT Co.LTD.

TRAVEL AGENCY

IATA

Տնօրէն՝ Արաբ Խաչատեան

- Ներքին եւ արտասահմանեան տուսեր
- Զուր (արտասահմանեան բոլոր երկրներ)
- Զուր (Պարսկաստանի տեսարժան վայրեր)
- IN Coming Tour

تلفن : ۸۸۳۱۱۶۳۹ ، ۸۸۳۱۱۷۰۲-۳ ، ۸۸۳۳۳۱۳۵-۷ تلفاکس: ۸۸۸۱۱۳۳۵

E-mail : shoaa@samapardaz.com خیابان قائم مقام فراهانی، ضلع غربی میدان شعاع، شماره ۲/۲

«ՆԱՐՄԱՔ»

قالیشوئی نارمک

Ընդունում ենք ամեն տեսակի պաստերներ, գունապերծում, շրջանակում եւ նորոգումներ:

Մասնագետ լաւորակ գորգերի լացման մէջ

Tel : 77 89 57 29 - 77 89 27 31

77 50 70 43 - 77 60 93 93

22 42 28 96 - 77 89 54 24

77 27 56 16 - 88 75 10 59

44 11 43 19 - 22 88 35 10

Mob : 0912 200 96 03

ARMENIA SIGHTSEEING

SATI TOURS

in Armenia and Karabagh

21 Mashtots Ave., Yerevan, Armenia

Tel.: 53 11 20, 53 99 00

E-mail: sati@arminco.com

www.satiglobal.com

ԺԱՄԱՆՑ

թիւ 32



Հորիզոնական

1. Հայ մեծանուն արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ (1899-1937): Ժողովրդական բոլորովին:
2. Սպասեակ (օտար): Արտօնուած սպանութիւն: Մուգ գոյն:
3. Արական անուն: Գերմանացի փիլիսոփայ,գիտնական (1724-1804): Փոխաբերական իմաստով՝ ամենայն ճշտութեամբ, առանց փոփոխութեան:
4. Ձիավարութեան միջոցներից: Զգեստին՝ նորոգութեան համար կցուած փոքրիկ կտոր:
5. Դա ունեն կենդանիները, ոչ մարդիկ: Աջից՝ տեղանունների ածանց: Խոշոր ձկան տեսակ, որ ապրում է ոչ խոր՝ անուշ ջրերում:
6. Շատ ցանկալի: Վիճակուած է բոլոր շնչաւորներին:
7. Խորտակուած գահ...: Ցուցական դերանուն երկու կողմից: Մետաղի տեսակ, կլայեկ: Դրական պատասխան:
8. Ողբալի, սգալի: Արական պատմական անուն:
9. Նախկին Խ.Միութեան հանրապետութիւններից: Արգելուած (օտար):
10. Փաղաքշական՝ ոտք: Վերջը սղոցուած կիսաթանկագին մետաղ: Արքայական խորհրդանիշ:
11. Եկեղեցական սպասաւոր: Գիւղական աշխատավայր: Անգլուխ՝ խիզախ...
12. Որդ: Նաեւ՝ երաժշտութիւն, նւագ:
13. Եպիսկոպոսի կառավարմանը ենթակայ նահանգ, գաւառ: Անիւ: Մտացածին, վերացական:
14. Կոհակ: Ժան Ռիշար...՝ Ֆրանսիացի գրող, հրապարակախօս (1884-1947): Ցանցառ:
15. Ասում են սիրոյ պահեստն է: Հաշւապահութեան մէջ՝ երկու կողմերից մէկը: Անյայտ թիւ (օտար):

Ուղղահայեաց

1. Հայ մատենագիր, հեղինակը «Պատմութիւն Հայոց» հնագոյն երկի: ...«Մեզ հերիք է քո մի...-ը» (Պ.Սեւակ):
2. Կաթնամթերքներից: Սա էլ ամէն բանի համն է: Այնքան էլ անտանելի չէ:
3.Ուշիմ, հնարագէտ: Ժողովրդական՝ գերի: Յոգնակի ստացական դերանուն:
4. Անձնական դերանուն: Թէ ում համար է մորմոքում Սայաթ-Նովայի լարը: Թռչունի տեսակ: Ժխտական ածանց:
5. Միայն: Լսել ու ենթարկուել: Ձեռնհաս, կարող:
6. Որեւէ վայրում հաստատուած ու ապրող անձ: Փաղաքշական՝ տնային կենդանի:
7. Անձնական դերանուն: Թերութիւն: Յաւելում: Գիշատիչ թռչուն:
8. Մասերի բաժանել, ընկճել: Երաժշտութիւն: Երգչախմբի մէջ չորս ձայներից մէկը (օտար):
9. Որտեղ: Տեղանունների վերջածանց: Առարկայ: Արական անուն:
10. Բազմած: Ցնդական իւղով ու դառը հիւթով խոտեղէն բոյս, բուժիչ յատկութիւններով, օշինդր:
11. Կազակական առաջնորդ: Գործողութիւն:
12. Ժողովրդական ասացուածքների ու իմաստալից խօսքերի մասնագէտ: Աւարա, անտուն:
13. Քաջ, արի: Նաւի արագութիւնը եւ անցած տարածութիւնը չափող սարք: Արտի մէջ բացուած հողաշերտ:
14. Ծառի դահիճը: Թիակաւոր մեծ բեռնանաւ:
15. Մանելու գործիք: Արւեստի ճիւղերից մէկով զբաղող կին արւեստագիտուհի: Հոլովուած անձնական դերանուն

Անցեալ համարի պատասխանները

25

4	1	5	2	7	3	8	6	9
7	9	2	8	6	5	1	4	3
6	3	8	4	1	9	5	2	7
8	2	9	3	4	1	7	5	6
3	5	7	6	8	2	4	9	1
1	6	4	9	5	7	2	3	8
2	7	1	5	3	6	9	8	4
5	8	6	1	9	4	3	7	2
9	4	3	7	2	8	6	1	5

105

6	9	2	1	3	7	5	8	4
1	4	3	9	5	8	2	7	6
7	5	8	4	6	2	9	1	3
2	8	1	6	9	3	7	4	5
9	7	6	8	4	5	1	3	2
4	3	5	7	2	1	6	9	8
5	2	4	3	1	9	8	6	7
3	1	7	5	8	6	4	2	9
8	6	9	2	7	4	3	5	1

164

7	9	4	8	3	1	2	5	6
1	5	6	9	2	4	3	8	7
3	8	2	7	5	6	9	4	1
6	3	5	2	4	7	8	1	9
4	1	7	5	9	8	6	2	3
9	2	8	6	1	3	5	7	4
5	6	9	4	7	2	1	3	8
2	7	3	1	8	9	4	6	5
8	4	1	3	6	5	7	9	2